

# «ՀՐԱՆՏԻ ՄԱՀԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՄԱՐ»

Հարցազրույց Ստամբուլի քաղաքապետարանի նախկին պատգամավոր, տեղի հայաշատ Բաքրբյուղ թաղամասի թաղապետարանի ներկայացուցիչ Հակոբ Հացպանյանի հետ, ով «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի հետ սովորել է նույն դպրոցում և մեծացել նույն թաղամասում:



*- Ձեր թուրքիայի քաղաքացու կարծիքով, Հրանտ Դինքի սպանությունը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ եվրասիտեզրման հավակնություններ ունեցող թուրքիայի համար:*

- Այսպես թե այնպես, վերջին շրջանում եվրոպա-թուրքիա հարաբերությունները լավ չէին: Չեմ կարծում, թե դրանք մոտ ապագայում էլ կբարելավվեն: Այս պահին շուն ու կատվի նման եվրոպացիները թուրքերի հետ խաղում են: Իսկ Հրանտի զոհվելուց հետո թուրքիան էլ ավելի վատ վիճակում է հայտնվել: Ամենահին հակված չեմ մտածել, թե սպանությունը պետականորեն է կազմակերպվել կամ ընդամենը 17 տարեկան ծայրահեղական տղայի ձեռքի գործն է:

*- Իսկ ո՞ւմ էր ձեռնտու Հրանտ Դինքի սպանությունը:*

- Կարծում եմ, արմատները գնում են դեպի ամերիկացիներն ու հրեաները: Կրկնում եմ, թուրքիան առանց այն էլ շատ խնդիրներ ունի, հատկապես քրդերի հետ կապված: Այս ֆոնի վրա Հրանտի վերացմանը հաստատ նրա շահերից չէր բխում: Գուցե գալիք 5-10 տարիներին էլ հասարակ մարդիկ չիմանան ով էր իրական պատվիրատուն: Մի բան, սակայն, պարզ է, Հրանտի զոհվելուց հետո Հայաստանի հետ թուրքիայի շփումներն ավելի դյուրին կլինեն: Որովհետև այս պահին թուրքիան անկյունում է հայտնվել: Կփորձեն մասնաճանաչում քննել: Թուրքիան դեռ կջանա եվրոպայի և Ամերիկայի առաջ արդարանալ: Եթե, օրինակ, 1936-ից մինչև վերջերս ոչ մի հայ իրավունք չուներ անշարժ գույքի առուվաճառքով զբաղվել կամ դրանք ժառանգել հայկական դպրոցի ու եկեղեցու, առդեն այս հարցերն էլ ուզում են շտկել: Նոյեմբերին թուրքիայում կկայանան խորհրդարանական ընտրություններ, գուցե թուրքերը ցանկանան նաև այնտեղ հայ պատգամավոր ունենալ: Ի դեպ, 1960 թվականից նման բան չի եղել:

*- Մեծ կշիռ ունեցող գործչին՝ Հրանտ Դինքին սպանեցին, այսինքն, եթե նախադեպը կա, հնարավոր է առաջիկա-*

*յում նման վայրագությունները կրկնվեն:*

- Նման բաներ միշտ էլ կարող են պատահել ամենուր: Հրանտը հայտնի մարդ էր, և իր մահը վտանգավոր էր թուրքիայի համար: Կրկնում եմ, կատարվածը պետականորեն կազմակերպված չէր: Բայց չմոռանամք, որ թուրքիայում պետության մեջ մի ուրիշ «պետություն» էլ կա անվտանգության խորհուրդը, որտեղից նախկին և այժմյան զինվորականները վարագույրի ետևից դեկավարում են երկիրը ու կապ ունեն մութ ուժերի հետ: Ո՞վ իմանա, գուցե Հրանտի սպանության մեղավորը վերջինս է:

*- Շեռաբրքի է, հայերը թուրքիայում ինչքանո՞վ են կարողանում պահպանել իրենց ինքնությունը:*

- Թուրքական կառավարությունն ուզում է, որ հայերն իր երկրում ապրեն իր ուզածի պես: Ու մենք այնքան հայ մնանք, ինչքան իրենք թույլ կտան: Օրինակ, վերջերս թռուռիկ են ունեցել ու ամուսնը Ձեփյուռ դրել: Եթե Հակոբին, Սարգսին, Պողոսին թուրքերը վարժվել են, Ձեփյուռը նրանց ականջին խորթ է հնչում: Հարցնում են ի՞նչ է նշանակում, ասում են մելթեմ թեթև քամի: Չարմանում են իսկ ինչո՞ւ Ձեփյուռ և ոչ թե Մելթեմ: Հասկանում եմ, որ դիտմամբ չեն այդպես ասում, այլ ինքնըստինքյան է ստացվում, ուզում են, որ իրենց պես ապրես ու մտածես: Յուրաքանչյուր հայ նման ճնշումներ իր վրա զգում է, պատահական չէ, որ ներազգային ընտրությունների ժամանակ (երբ ընտրվում է թաղականների խորհուրդը), հայերը վախենալով, հաճախ ընտրում են այնպիսի մարդկանց, ովքեր լարծուն են, համարձակ հայտարարություններ չեն անում, հարմարվող են: Օրինակ, 2 օրաթերթ ունենք՝ «Ժամանակ» և «Մարմարա», որոնց խմբագիրներն իրենց ընտանիքները ապրեցնելու համար են թերթը աշխատեցնում, այնպես որ, նրանց գոյությունը հայությանը առանձնապես օգուտ չի բերում: «Ակոսն» էր միայն,

որ համարձակ հարցեր էր առաջ քաշում: Վստահ եմ, որ Դինքի զոհվելուց հետո այն ավելի համարձակ կգրի և ավելի կարդացվող կդառնա:

*- Ինչպիսի՞ն են թուրքական մամուլի արծազանքները Հրանտ Դինքի սպանության հետ կապված, և ո՞ր կազմակերպությունները դատապարտեցին կատարվածը:*

- Մի շարք ստեղծագործական և պրոֆեսիոնալ միություններ, երիտասարդական շարժումներ դատապարտեցին այդ չարագործությունը: Հրանտի զոհվելը հաստատ դրական կանդիդատնա թե՛ ի նպաստ թուրքիայի վարչական ատյանների, թե՛ հայկական հարցի լուծման: Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին, առաջատար հեռուստաընկերությունները 24 ժամ այս մասին են խոսում: Այդ լրագրողների մեջ 70-ականների ըմբոստ երիտասարդական շարժումներն ու մասնակիցներ կան, ժամանակին որոնց հետ էր նաև Հրանտը: Չնայած թուրքիայի բոլոր լրատվամիջոցների տերերը 2 հոգի են, ու վերջիններս են թելադրում ինչ անել, շատ լրագրողներ կարողանում են իրենց մասնագիտական պարտքը ազնվորեն կատարել: Կան նաև որոշ ռեակցիոն լրատվամիջոցներ, որոնք հնչեցնում են այնպիսի տեսակետներ, թե իբր Դինքի սպանությունը հայերի ձեռքի գործն է:

*- Ինչո՞ւ այլևս Ստամբուլի քաղաքապետարանի պատգամավոր չեք առաջադրվում:*

- Մեկ տարի է այլևս պատգամավոր չեմ, որովհետև պատգամավոր լինելը քիչ է հայկական խնդիրներին լուծում տալու համար: Ազգությամբ հայ մարդը թուրքիայում մեծամասնական ընտրակարգով չի կարող ընտրվել՝ թուրքերը ծայրեր չեն տա, իսկ հայերն էլ կվախենան նրա օգտին քվեարկել: Հայերը ընտրվում են, եթե այս կամ այն կուսակցության ընտրացուցակի առաջին շարքերում են: Թուրքերն էլ են ժողովրդավար երևալու համար նրանց անցողիկ տեղեր պահպանվում: Ու բանի որ պատգամավոր ընտրվելու դեպքում էլ հայերի խնդիրների մասին չես կարող արտահայտվել, մեկընդմիջտ հրաժարվեցի այդ մտքից, մանավանդ մեզ ընդունող կուսակցությունը, որ սոցիալ-դեմոկրատ է կոչվում, ամենահին էլ այդպիսին չէ և երիտթուրքերի գաղափարախոսության շարունակողն է:

*Ձրուցեց Գոհար ՀԱՆՈՐԴԱՆԸ*

## 2 Ծ ԲԱՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ ՀՐԱՆՏ ԴԻՆԻՆ

Հրանտ Դինքի հուղարկավորությանն Երզրդանի կառավարության ամուսնից մասնակցել են պետնախարար, փոխվարչապետ Մեհմեդ ալի Շահինը, ներքին գործերի նախարար Աբդուլբադի Աքսուն, Ստամբուլի նահանգապետ Սուլամեր Գյուլերը, Շիշլիի քաղաքապետը, ինչպես նաև հույն և հրեա ազգային փոքրամասնությունների, ասորի, ալավի և կրոնական այլ խմբավորումների հոգևոր ներկայացուցիչներ:

Մանրակիցներ թվում են եղել Չախ-ժողովրդավարական կուսակցության գլխավոր նախագահ Ջեքի Սեզերը, քրդամետ ժողովրդավարական հասարակարգ կուսակցության գլխավոր նա-

խագահ Ահմեդ Թյուրքը, Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը, պատգամավորներ, այլ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների պատվիրակություններ: Մասնակցել են նաև թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանը՝ ուղեկցությամբ գլխավոր հյուպատոսի, Ստամբուլում ԱՄՆ-ի, Հոլանդիայի, Շվեդիայի, Հունաստանի հյուպատոսները, գերմանական Կանաչների միության և ԵՄ-Թուրքիա միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահները, Հայաստանի և հայկական սփյուռքի ներկայացուցիչներ, որոնց գլխավորել են հոգևոր առաջնորդներ:

# ՌՃԻՐ

## ԹՈՒՐԲԸ ՄԻԱՅՆ ՓԱՍՓՈՒՇՏԻ ԼԵԶՈՒՆ ԳԻՏԷ

## ՀՐԱՆՏ ԳԻՆՔԸ ԱՆՄԱՀԱՅԱՎ

Ճշմարտախոս հայր՝ Յրանտ Դինքը թուրք փանփուշտի գոհ: Ընդվզվելը քիչ է: Ամբողջ սրտով կը բողոքենք այս ստորնագոյն ոճիրին դէմ:

Յրանտը հայութեան ծայնն էր, ահա ինչու լռեցուցին զինք: Յայութեան այս նոր գոհը թող ցոյց տայ աշխարհին, թէ թուրքը միայն փանփուշտի լեզունն զիտ:

Ո՞վ ըսած է՝ սուրով, փանփուշտով սպանողը փանփուշտով ալ կ'երթայ: Սերտենք պատմութեան դասը, եղբայրութեան ձեռք մեկնելէ առաջ:

*Թորոս ԹՈՐԱՆԵԱՆ, Յալէպ, 19 յունուար, 2007*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յրանտ Դինքի սպանութեան բոթը ցնցեց ոչ միայն համայն հայութեանը, այլև միջազգային մամուլին ու քաղաքական շրջանակներին: Յամաշխարհային հայկական կոնգրեսը ողջ հայ ժողովրդի հետ սգուն է Մեծ հայի կորուստը և իր խորագգաց վշտակցությունն է հայտնում նրա ընտանիքին, հարազատներին և ընկերներին: Տաղանդավոր լրագրողն առաքելություն ունեցող գործիչ էր: Այդ առաքելությունը նրան ոչ ոք չէր տվել, այլ ժամանակը, պատմական անհրաժեշտությունն էր նրան թելադրել: Նա առաջիններից մեկն էր թուրքիայում, որ խոսեց Յայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին: Յարկավոր էր Յայոց ցեղասպանության մասին ճշմարտությունը հասու դարձնել հասարակ մարդկանց՝ հենց թուրքիայում, որտեղ երիտասարդությունը կազմակերպված ձևով, պետական կրթական-քարոզչական քաղաքականությամբ շարունակում է պահվել հիմարացված վիճակում: Յարկավոր էր հասնել պատմական ճշմարտության բացահայտմանը, ընդհուպ Յայոց ցեղասպանության ճանաչմանը հենց ցեղասպան երկրում և դրանով ինչ-որ չափով վերականգնել պատմական արդարությունը, նպաստել հայ և թուրք ժողովուրդների, Յայաստանի և թուրքիայի հարաբերությունների պարզեցմանը:

Ավա՞ղ: Պանթուրքիստական ազգայնամուլ իդեալներով սնված թուրքական շրջանակները նրան թույլ չտվեցին ի կատար ածելու այդ առաքելությունը, ինչպես որ դրան նախապես 3 անգամ խոչընդոտել էր թուրքական, այսպես կոչված, արդարադատությունը: Եվ թուրք պատանի մարդասպանի գոնակը դաժանաբար ընդհատեց և՛ առաքելի կյանքը, և՛ նրա առաքելությունը: Իսկ դա վկայում է, որ ցեղասպանությունը դեռևս շարունակվում է:

Յրանտ Դինքը դարձավ Յայոց ցեղասպանության ժխտման ուղղությամբ թուրքիայի դեկավարության վարած քաղաքականության գոհը: Յամաշխարհային հայկական կոնգրեսը դատապարտում է թուրքիայի դեկավարության նման քաղաքականությունը և դրա արդյունքում թուրք ազգայնամուլների վայրագ ոճիրը համամարդկային արժեքների ջատագով Յրանտ Դինքի դէմ:

Զգաստության, իրատեսության, համախմբվելու, Յայաստան-սփյուռք կազմակերպվելու պահին է մեր ժողովրդի համար: Յրանտ Դինքի նահատակումը պետք է խթանի մեր ջանքերը դեպի պատմական ճշմարտության համընդհանուր ճանաչում, այդ թվում հենց թուրքիայի կողմից, որը քաղաքակիրթ ազգերի ու կառույցների մեջ ընդգրկվելու համար նախ պետք է մաքրվի իր մեծագույն մեղքից, զղջա, ներողություն խնդրի և հատուցում կատարի հայ ժողովրդին:

Յրանտ Դինքի նահատակությունը մեկ անգամ ևս մեզ ստիպում է համախմբվել ազգային շահերի շուրջը:

Յանգիտտ իր աճյունին:  
*Արա ԱՐՐԱՂԱՄՅԱՆ, ՂԱՍԱՇԽԱՐԱՂԱՅԻՆ ՂԱՅՎԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ*

## Յրանտիայի նախագահ Ժակ Շիրակի ցավակցական նամակը Յրանտ Դինքի այրուն

Ես տեղեկացա այն սարսափելի լուրին, որը Ձեզ հարվածեց անսպասելիորեն, Ձեզ ու Ձեր երեխաներին, նաև թուրքիայի ողջ հայկական համայնքին, ինչպես նաև թուրք ժողովրդին: Չկան այնպիսի խիստ բառեր, որոնցով կարողանամ դատապարտել այդ նողկալի արարքը, որը թուրքիային զրկեց իր ամենից ավելի քաջ և ամենից ավելի ազատ ծայններից մեկից: Իր հիմնարկած «Ակոս» թերթի սյունակներում և բոլոր ամբիոններից նա համընդհանուր էր պայքարել իշխողության պարտականության և հայ-թուրքական հաշտեցման համար:

*Յրանտիայի նախագահ Ժակ ՇԻՐԱԿ*

Պոլսահայ խիզախ ու մկրիյալ քաջամարտիկ, Յայ Դատի ու հայոց ցեղասպանության ճանաչման գինվոր, հայ մամուլի վաստակաշատ գործիչ Յրանտ Դինքի սպանության բոթը ցնցեց բոլորիս:

Որպես շիտակ ու ինքնամոռաց հայրորդի Դինքն իր կյանքը անմնացողով մկրեց իր ժողովրդի արյունախեղդ Դատի ճանաչման գործին և զազանաբար ու դավադրության թիրախ դարձավ նույն այդ արդար նպատակին անվերապահ մկրվելու մեղքով:

Դինքը նաև համամարդկային արժեքների ջատագով էր և նրա կորուստը սգուն են տարբեր ազգերի գիտակից ու արդարամիտ խավերը: Իրանահայ Ազգային և Մշակութային միությունը հայ ազգի բոլոր հատվածների պես, միշտ էլ ոգևորվել է թրքահայ քաջորդու հերոսական կեցվածքով: Նա առաջինը թուրքիայում խոսեց հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին: Նա անտես համարեց ամեն ինչ իր կյանքին սպառնացող այլազան վտանգները, թեև լավ էր ճանաչում այդ դավերը նյութող շրջանակների նեց ու անբարոյ էությունը: Նա իր երկրի հանձնառու և լուսամիտ քաղաքացին էր, ամենապայծառ իդեալների կրողը:

ԻԱՄՄ-ն այսօր հայ ազգի բոլոր հատվածների հետ սգուն է Մեծ հայի կորուստը և իր խորագգաց վշտակցությունն է հայտնում նրա տիկնոջը, զավակներին ու հարազատներին:

Աշխարհի պատմությունը ողորված է խավարի դէմ պայքարի մեջ հավերժացած մկրիյալների արյունով:

Դինքերի իրաշխիք կենքը ապրելու օրինակ է բոլոր նրանց համար, ովքեր մարդկային տեսակի փրկության հույսն են փայլաբայում: Իսկ նրա կարմիր մահը վառ գրավականն է այն հույսի հարատևման համար, որ Յայոց Դատը դինքերի շնորհիվ ճանաչվելու է ի հեճուկս բոլոր այն խավարամիտ հեղբուների, որոնք տևում են տասնամյակներ, բայց երբեք հավերժական չեն:

Դինքի արյունը թանկ է, Դինքի արյունը չի մոռացվելու...  
Յավերժ փառք նրա անմահ հիշատակին:

*ԻՐԱՆԱՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 20 հունվարի 2007 թ.*

## ՀՐԱՆՏ ԳԻՆՔԻ ԻՄԱՍՏԱԿԻՑ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿՑՎԱԾ ՄԱՀԸ

5-րդ դարի հայ պատմիչ Եղիշեն գրել է. «Մահ ոչ իմացյալ՝ մահ, մահ իմացյալ անմահություն»:

Յայոց ազգային ինքնության և ազատության պահպանման համար մղված Վարդաանց պատերազմի օրերին գրված այս խոսքերը միանգամայն պատշաճ են բնութագրելու Յրանտ Դինքի իմաստալից կյանքը և գիտակցված մահը:

Նա ապրեց որպես մարդկային և ազգային արժանապատվության գաղափարների սերմնացան, որպես այդ սկզբունքները հարգելու լուսավորյալ տարածող: Եվ այդ համամարդկային գաղափարների սերմերը նա տարածեց այն ՎԿՄՍ-ի մեջ, որն ինքն էր բացել, մի երկրում, որն էսպես այդ սերմերի կարիքն ուներ:

Նա գիտակցում էր ինչ է անում, ինչ է ասում և գրում, և որտեղ է ապրում, սակայն նա դա անում էր, քանի որ այլ կերպ չէր կարող ապրել, քանի որ իր ազգային արժանապատվությունը թույլ չէր տալիս նրան ապրել և գործել այլ կերպ: Այնպես որ նա նաև գիտակցում էր, որ կարող է և նահատակվել իր նախնիների նման:

Թող իր նահատակությունը գիտակցության վերածնունդ բերի այն երկրում, որը նա շատ էր սիրում, իսկ այն ՎԿՄՍ-ը, որ նա բացեց, շրջադարձային դառնա դրա իրականացման համար:

Խաղաղություն նրա հոգում և մխիթարություն նրա սիրասուն ընտանիքին, գաղափարակից ընկերներին և մեր ողջ ազգին:

Ցավակից  
*Վերծիմեն ՍՎԱԶԼՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, Յայաստանի Յանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի առաջատար գիտաշխատող*

# ՀՐԱՆՏԸ ՉՈՂՎԵՑ ՆԱՀԱՏԱԿԻ ՄԱՀՈՎ

Ամեն անգամ, երբ «Կիլիկիան» մտնում էր հերթական նավահանգիստ, անայայնաճ զանգահարում էի կամ հայկական դեսպանության աշխատակիցներին, կամ հոգևորականներին, կամ հայ համայնքների և քաղաքական կուսակցությունների ղեկավարներին: Դա անհրաժեշտ էր հայրենակիցների հետ հանդիպումները կազմակերպելու համար: Նախապես պատրաստած ցանկում Ստամբուլի նավահանգստի կողքին ոչ մի նշում չկար: Զանգահարեցի Էջմիածին և Հայաստանի արտգործնախարարություն: Շուտով նոթատետրումս հայտնվեցին անհրաժեշտ բոլոր անուններն ու հեռախոսահամարները: Անձնակազմի մտավախությունները փարատվեցին: Տեղեկացանք, որ արշավախմբին կաջակցի Ստամբուլում Հայաստանի ԱԳՆ-ի ներկայացուցիչ (Սևծովյան համագործակցության գծով) Արսեն Ավագյանը: Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ պայմանավորվածության համաձայն, անձնակազմի անդամներին կընդունի Կոստանդնուպոլսի պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Սուբաֆյանը:

Սակայն փոթորկի պատճառով «Կիլիկիան» գրեթե մեկ շաբաթ հարկադրված մնաց բուլղարական Ցարևո նավահանգստում: Ողջ այդ ընթացքում անընդհատ զանգահարում էի Արսենը: Զանգահարում էր նաև մի անժամոք տղամարդ, որի ծայրի մեջ անկեղծ ուրախություն էր զգացվում: Նա ասաց իր անունը՝ Հրանտ, և ազգանունը՝ Տինք: Հետո արտաբերեց տառ առ տառ՝ ստացվեց Դինգ: Ես հարցրեցի. «Հինա Տինք, թե՞ Դինգ»: Նա պատասխանեց՝ ինչպես կանենաք: Ես արտաբերեցի՝ Դինգո: Նա լիաթոք ծիծաղեց: «Ախր ինչո՞ւ ես ուրախանում: Չէ՞ որ ես, կարելի է ասել, վերակնքեցի ազգանունը»: Նա էլ ավելի բարձր ծիծաղեց ու ասաց, որ դեռ շատ վաղուց, պատանի հասակում, ընկերները նույնպես այդպես էին անվանում իրեն: Հարցրեցի նրա տարիքը: «Ահա արդեն մի ամբողջ տարի է բոլորից ատում եմ, որ ոչ թե 50 տարեկան եմ, այլ ամբողջ կես դարեկան», հաջորդեց պատասխանը: Առանց Հրանտի անհնար կլինե՞ր պատերազմել «Կիլիկիա»-ի այցը Ստամբուլ: Դա 2004 թվականն էր:

Դրանից հետո Հրանտը ապրեց ևս երեք տարի: Կարծում եմ, սրանք իր կյանքի ամենակտիվ, ստեղծագործական առումով ամենաբեղուն տարիներն էին: Այնպիսի տպավորություն է, որ նա անչափ շտապում էր՝ ինչ-որ բան կանխագայով: Հրանտի հետ հանդիպել եմ ընդամենը երկու անգամ: Ստադիոն էինք որևէ առիթով էլի համրիպել, ինչպես ինքը ասաց՝ ավելի «լայն ու խորը»: Դա անցած տարվա սեպտեմբերին էր: Զրույցը ստացվեց և՛ «լայն», և՛ «խորը»: Խոստովանեց, որ համաձիտ է իմ այն տեսակետին, որ պետք չէ սևեռվեցն միայն սարսափելի 1915 թվականի վրա: Նա, ինչպես ոչ այլ ոք, գիտեր և տեսնում էր, թե ինչպես են թուրքիան և նրա լրբիստները շահարկում այն փաստը, որ Հայաստանն օրենք է ընդունել բացառապես 1915 թվականի Ցեղասպանության մասին: Դա ձեռնտու է թուրքերին, որոնց հաջողվում է հեշտությամբ համոզել աշխարհին, թե 1915 թվականը Համաշխարհային պատերազմի ամենաթեժ պահն էր, իսկ թուրքիան պատերազմում էր Ռուսաստանի դեմ: Իսկ իր հայատակ հայերը հակառակորդի կողմն էին: Այնպես որ, միանգամայն բնական էր. ըստ պատերազմական ժամանակի օրենքների, այդ պայմաններում անհրաժեշտ էր վերաբնակեցնել հայերին՝ հեռացնելով ռազմական գործողությունների թատերաբեմից հեռու շրջաններ: Դե, բնականաբար, մնան դեպքերում լինում են նաև դաժանություններ: Այդ առումով, խնդրեմ, մեղադրեք թուրքերին՝ ինչքան կամենաք: Բայց միայն ոչ Ցեղասպանության հարցում, քանզի 1915 թվականին պատերազմ էր:

Հրանտը խոստացավ, որ անայայնաճ կպատրաստի մի շարք նյութեր, որտեղ ապացույցներով կլուսաբանվի պատմական այն փաստը, որ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում անընդմեջ շարունակվել է ավելի քան 30 տարի: Եվ ընդգծեց, որ խոսքը պետական քաղաքականության աստիճանի հասցված Ցեղասպանության պաշտոնական փաստաթղթի մասին է:

Բնավ պատահական չէ, որ այսօր իշխեցի մեր այդ գրույցը: Այո՛, Հրանտը համաձայնեց իմ առաջարկի հետ, որ 1915 թվականի մասին մեր օրենքը պետք է փոխարինել 1893-1923 թվականների Ցեղասպանության մասին օրենքով: Բայց ահա նրա սպանությունը, այն էլ հենց Ստամբուլում, ինչ-որ միստիկական միտք ներշնչեց ինձ, որ 1915 թվականն այնուամենայնիվ ոչ միայն սարսափելի, այլև ճակատագրական տարի է: Այն դրոշմվեց մեր ժողովրդի հոգում, քանզի հենց այդ տարի վայրենացած թուրքիան կազմեց հայ մտավորականների սև ցուցակը: Եվ միայն մեկ օրվա ընթացքում՝ առավելա-

պես Ստամբուլում, ձերբակալվեց և հետագայում սպանվեց ավելի քան 700 մարդ: Այդ ցանկը գլխավորում էր ականավոր արձակագիր և հրապարակախոս Գրիգոր Չոհրապը: Եվ ահա պատմությունը կըրկնվում է: Ստամբուլում դաժանաբար սպանվեց հայ հրապարակախոս:

Ներկայումս, թվում էր, այլ ժամանակներ են: Հասակ է առել հայերի նոր սերունդ և նրանց մեջ՝ 53-ամյա հրապարակախոսը, որը իրոք հավատում էր, որ բուն թուրքիայում անչափ շատ են մարդիկ, որոնք համարում են, որ այսօրվա թուրքերի գոյությունը կբարձրացնի իրենց երկրի հեղինակությունը: Եվ դրա համար, ի դեպ, շատ բան հասցրեց անել Հրանտ Դինքը: Երբ քաջշքուկից ու սպառնալիքներից հոգնած որոշել էր հեռանալ թուրքիայից, նրա բազմաթիվ թուրք երկրպագուները և նույնիսկ համախոհները համառորեն խնդրեցին նրան մնալ և շարունակել այդքարը:

Կասկածից դուրս է. մարդասպանի ձեռքն ուղղորդել է ոչ թե պարզապես թուրքիան, այլ պաշտոնական թուրքիան, որն անդադար ենթարկում էր Դինքին հալածանքների, վիրավորանքների ու սպառնալիքների: Եվ այսօր հենց քծնանքի դեմ ավանդաբար երկրպագու պաշտոնական թուրքիան է ցավակցություն հայտնում վրիպաբար հայտարարելով, թե Դինքի վրա արձակած կրակոցները թուրքական ժողովրդավարությանն ուղղված կրակոցներ էին: Ինչպես՞ այստեղ չհիշես թուրքիայի սնուցած աղբբեջանի տականքներին, որոնք այս հունվարյան օրերին ոչ պակաս վրիպաբար հայտարարում են աշխարհով մեկ, թե 1990 թվականի հունվարի 19-ին խորհրդային գործերը գնդակահարեցին աղբբեջանական ժողովրդավարությունը:

Պաշտոնական թուրքիան չէր կարող չհիմանալ, թե ինչով կավարտվեն Հրանտ Դինքի նկատմամբ անվերջանալի դատավարությունները, որը ոչ թե վրեժի էր ձգտում, այլ ճշմարտության: Դժվար չէ գուշակել, թե ինչու էր Հրանտը վերջին տարիներին այդչափ շտապում, փորձում առաջ ընկնել ժամանակից: Նա հիսնականներում էր, որ ճշմարտությունը հապաղում չի հանդուրժում: Որ միայն իրոք բացահայտելով ու գիտակցելով ճշմարտությունը թուրքիան կկարողանա վերջիվերջո ձերբազատվել մեղքի չարագույժ բարդությանից: Դինքը հասկանում էր, թե որքան կարևոր է դա և թուրքերի, և հայերի համար: Ահա և վճռել էր, որ պետք է շտապել, պետք է հասցնել: Նա հասկանում էր նաև, որ եթե չհասցնես բացահայտել փրկարար ճշմարտությունը, ապա չես կարողանա կանխել այսպիսի չարիքը: Եվ այդտեղ հաջորդ սերունդը դատապարտված կլինի դիմելու վրիժառության: Հենց դրանից էր ուզում խուսափել Հրանտը, որը երբեք չէր ցանկանա բացականել, ինչպես դա բազմիցս եղել է անցյալում. «Կգա այն օրը, երբ մեր ոսկորներից ծնունդ կառնի մի վրիժառու»: Ինչպես և չէր ցանկանում, որպեսզի հայրենակիցները թուրքի երեսին չպորտնեն, որ թշնամուց վրեժ լուծելու լավագույն միջոցը նրան չնմանվել է: Եվ Հրանտն օրըստօրե ավելի էր համոզվում, որ իր փիլիսոփայությունը շատ էլ նորմալ է ընկալվում թուրք զանգվածների կողմից:

Հենց դրանից էլ վախենում էր պաշտոնական թուրքիան: Նրան, դատելով ամենից, բնավ ձեռնառու չէ մնալ փիլիսոփայությունը, որն ի վերջո պետք է հանգեցնի գոյմնան: Ահա և վարվեց իրեն բնորոշ ձևով՝ թուրքավարի, բացարձակապես չկասկածելով, որ ստամբուլյան կրակոցներն ամմիջապես դարձան ազդանշան ավելեղվող նոր ժամանակի հաշվարկի սկիզբը անմահությունը թևակոխած Հրանտի համար:

Պաշտոնական թուրքիային չի հաջողվի կոծկել իր չարագործությունները, հայերի Ցեղասպանության փաստի համառ ժխտումը, հայ լրագրողի անօրինական հետապնդումը, հայտարարելով, թե հանցագործն իբր ինչ-որ խղճուկ թմրամուլ է: Կասկած չկա, որ կգա մի օր, երբ կհերոսացնեն պատվերի այդ կատարողին, ինչպես դա ներկայումս անում են Ռաբբիում այն դահիճ նկատմամբ, որը կացնահարեց քնած մարդուն միայն այն պատճառով, որ նա հայ էր:

Մշտապես հոգեմաշ հալածանքների ենթարկված Հրանտ Դինքը գոհվեց նահատակի մահով: Իսկ դա արդեն մարտիկի որակապես նոր կերպար է: Հերթական չարագործության կազմակերպիչները դա հաշվի չէին առել: Հաշվի չէին առել ի դժբախտություն իրենց:

Հ.Գ.- Թանկագին Հրանտի հարազատներին և մտերիմներին հասցեագրված բազմաթիվ ցավակցություններին միանում է նաև «Կիլիկիա» հայկական առաջատար անձնակազմը, որը երբեք չի մոռանա նրա բարի ժպիտն ու տխուր աչքերը:

# ԹԻԿՈՒՆՔԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՉԿԱՐ

Չրանտ Դինքի սպանությունից աշխարհը ցնցվեց: Մի քանի օր շարունակ լուրը չէր իջնում համաշխարհային լրատվամիջոցների առաջին էջերից: Պատճառն, իհարկե, այն չէր, որ թուրքիայում լրագրող էր սպանվել: Պատճառն այն էր, որ թուրքիայում սպանված լրագրողը տարիներ շարունակ մի հարց էր բարձրացնում, որը կարող էր խոչընդոտել թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացին:

Ամբողջ խնդիրն այն է, որ Չրանտ Դինքը մեկն էր այն եզակի հայ մտավորականներից, ովքեր ոչ միայն պայքարում էին հանուն պատմական արդարության վերականգնման, այլև անում էին ամեն ինչ, որպեսզի հայ ժողովուրդը կոնկրետ օգուտներ ունենա այդ արդարության արդյունքում: Այսինքն՝ նա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մեծագույն նվիրյալներից մեկն էր: Նա ոչ միայն գիտեր, որ թուրքիայում իսկապես հայերի ցեղասպանություն է տեղի ունեցել, այլև գիտեր, որ թուրքիան վաղ թե ուշ ընդունելու է այդ փաստը: Ավելին՝ գիտեր, որ այդ ընդունումը հենց թուրքիայի շահերից է բխում, և այնքան համարձակություն ուներ, որ բարձրաձայն ասում էր այդ մասին: Ինչևէ:

Մեղավոր էն արդյոք թուրքիայի իշխանությունները Չրանտ Դինքի սպանության համար: Իհարկե մեղավոր են: Եթե նույնիսկ ընդունենք, որ սպանությունն իրականացնողը տասնութամյա ֆանատ է, միևնույն է՝ պարտավոր ենք արձանագրել, որ կատարվածը տասնամյակներ շարունակ թուրքիայում պետականորեն իրականացված հակահայկական քարոզչության արդյունք է: Այդ նրանք են տասնամյակներ շարունակ իրենց ժողովրդին համոզել, թե թուրքերը երկրագնդի ազնվագույն ցեղն են, իսկ հայերը 20-րդ դարակազմի կոտորել են իրենց: Եվ հասկանալի է, որ Ստամբուլում կազմակերպված միտինգների «հովանավորը» թուրքիայի իշխանություններն են, որովհետև թուրքիան իր առջև Եվրամիությունն մտնելու խնդիր է դրել: Դրա համար էլ հազարավոր թուրքեր Ստամբուլի փողոցներում մոմեր էին վառել՝ «Մենք ենք Չրանտ Դինքը», «Մենք էլ ենք հայ» և այլ կարգախոսներով: Պետությունն իր առջև խնդիր է դրել, իսկ պետական

շահը թուրքիայում գերակա է ամեն ինչից: Իսկ ինչպե՞ս մենք արձագանքեցինք: Ցավոք, մեր արձագանքն ի սկզբանե սխալ էր: «Թուրքը մնում է թուրք»՝ ահա այդ օրերի մեր հիմնական արձագանքը, մինչդեռ հենց Չրանտ Դինքի սպանությունը լավագույնս ապացուցեց, որ թուրքը չի մնում թուրք, թուրքը զարգանում է: Թուրքն իր երկրում իր իսկ ձեռքով սպանված հակաթուրք լրագրողի համար մոմեր է վառում ու աչքի տակով նայում է դեպի Չայաստան՝ «ահա ես քաղաքակրթվել եմ և պատրաստ եմ դերասանություն անել, իսկ դու պատրաստ ես»: Թուրքերն, իհարկե, մեծ հաշվով օգուտ կքաղեն այս ոճրագործությունից: Միաժամանակ և՛ կվախեցնեն բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն բարձրաձայնել Ցեղասպանության հարցը, և՛ Եվրամիությանը ցույց կտան, թե որքան լավ են սովորել հանուն խոսքի ազատության պայքարելու և մոմեր վառելու դասը: Եվ հավատացե՛ք՝ այնքան անկեղծ կհուզվեն, որ մեկ էլ տեսար՝ ժամկետից շուտ մտան Եվրամիություն: Բա իհարկե, վիշտը համախմբում է:

Իսկ մենք համառորեն կշարունակենք զարմանալ «առ այն», որ հայերին չեն սիրում: Ընդ որում՝ չեն սիրում ամբողջ աշխարհում: Ստամբուլում հայ խմբագիր են սպանում, Ռուսաստանում հայ դպրոցական են սպանում, Լոս-Անջելեսի բանտերում 14 հազար հայ կալանավոր կա... Ու այդպես էլ չենք հասկանա, որ մեղավորը Չայաստանի Չանրապետությունն է: Որովհետև եթե մենք նորմալ պետություն ունենայինք, ինչո՞ւ պիտի հայ անչափահաղ դպրոց գնար Մոսկվայում, ինչո՞ւ պիտի Չայոց ցեղասպանության հարցը օտարերկրյա քաղաքացի խմբագիրը բարձրացներ, և ի՞նչ գործ ունեին հայ հանցագործները օտարերկրյա բանտերում:

Այո, եթե դու պետություն չունես, քեզ անընդհատ սպանելու են, և քո մահը լավագույն դեպքում սզալու են պետականորեն: Այնպես որ՝ միակ էլքը պետությունն ունենալն է: Ավելի լավ է պետության դեմ միտինգներ անցկացնենք, քան խղճան պետություն չունենալու կապակցությամբ:

Գրիգոր ՈՍԿԱՆՅԱՆ

## ՏԵՍՈՒՐ ԵՐԳ

Որդիդ լքեց, Հայաստան  
Մի՛ հավատա, հետ չի գա,  
Հեռվում գտավ ապաստան,  
Թեև չունի ապագա:  
Նա որբացավ առանց քեզ,  
Չգիտակցեց թեև այդ,  
Օտար երկրում հողմակեզ,  
Չզգաց նույնիսկ խղճի խայթ:  
Մինչ սնեցիր դու նրան  
Ոգեհզոր մայր ինչպես,  
Որ նա լինի անվարան  
Արարատիդ արծվի պես:  
Քո անունով միշտ տհաս  
Կասի խոսքերն իր հպարտ,  
Թե կարոտը իր անհաս  
Զյունն է լեռան Արարատ:  
Հայ մեծերից կխոսի,  
Պատմությունից դարերի,  
Թե ոնց զորքը պարսիկի  
Ծնկեց սրից հայերի...  
Բայց թե մի օր իր հեռվում,  
Պիտ մայրեմին մոռանա,  
Օտարատենչ այդ կռվում  
Հայ ծնվելն էլ ուրանա:  
Որդիդ լքեց, Հայաստան,  
Ափսո՛ս, գնա՛ց, հետ չի գա,  
Բայց ինքնությամբ անասան  
Արարատն են բարձրագահ...

Սիրական ՍԵՎՈՒՆԻ

## Ասուլիս

ՉԱՂՈՐԴԱՎԱՐ. - Այսօր մեր հյուրն է պատգամավորության թեկնածու Ասլան Ասլանիչը:  
Եկրանին երևում է մեր հեռախոսահամարը, տվեք ձեր հարցերը: Իսկ մինչ այդ մեր թանխոսից հյուրը համառոտ կներկայացնի իր հարուստ կենսագրությունը:  
ԱՍԼԱՆ ԱՍԼԱՆԻՉ. - Հարգելի սեղանա... հեռուստադիտողներ... Աղքատ մարդու տղա եմ: Հերս էնքան աղքատ էր, որ եթե տղա չլինեի, կյանքում խաղալու բան չէի ունենա: Փոքրուց հաճախել եմ հատուկ օժանդակ դպրոց... Բնություններով: Հիմի երեք դիպլոմ ունեմ: Մեկն էլ ես երկու օրը տղերքը կբերեմ: Ես էլ եմ մասնակցել Արարատի դալմադալին... հեռակա կարգով. որ Եուզին գրավեցինք. «Բաքու» ռեստորանում մինչև լույս քեփ արեցինք... Բիզնեսս քորփուց եմ սկսել. ջրին գազ էինք խառնում, հանքային ջուրը ծախում: Հիմի լիֆտերի գործարարը լիֆտերի եմ շուռ տվել... Կուրսմետրերով Չինաստան ենք տանում... Նաև պայթուցիչներ եմ արտադրում. Դրանք կգտնեք այնտեղ, որտեղ թողել եք երեխաներին: Կարողալու հետ գուլիս չունեմ, մենակ գրում եմ: (Չանգի ծայր) Ինչի՞ տ խանգարում, արա... Պրյամոյ եթերի եմ... Այ ոչխար, բա էդտեղ մի ոչխար չկա՞, որ էդ ոչխարը տանի Բոշի թաղ... Կազմակերպե՛ք...  
Չաղ. - Ունենք հեռախոսագնա: Այո, դուք եթերում եք...  
Չարց. - Ասլան Ասլանիչ, մենք ձեզ համար գծվում ենք ու ձեզ ենք ընտրելու: Ուզում ենք իմանալ՝ դուք հարու՞ստ մարդ եք:  
Ա.Ա. - Ես եկելեմ ասուլիսի, ոչ թե պարծենալու...  
Չարց. - Դուք մեր աստվածն եք, դուք բախտավոր մարդ եք...  
Ա.Ա. - Միայն կանայք են բախտավոր, նրանք կին չունեն:

Չարց. - Դուք դժգոհ եք ձեր կնոջից...  
Ա.Ա. - Նա դեռ կարծում է, թե իր հետ ամուսնացել եմ հոր հարստության համար: Մինչդեռ կամուսնանայի, ում հայրն էլ կարուստ լիներ:  
Չարց. - Ինչպե՞ս գտաք ձեր կնոջը:  
Ա.Ա. - Այդ հարցում ես ոչ մեկին չեմ մեղադրում, ես եմ գտել...  
Չարց. - Մոտավորապես քանի՞ մարդ է աշխատում ձեր հիմնարկում:  
Ա.Ա. - Մոտավորապես... կեսը:  
Չարց. - Մեր ազգը քջանում է... Մեր պապերը ունենում էին 10-12 երեխա...  
Ա.Ա.-Եղ հարցն՝ իմ վրա... Կհավաքագրենք 20-24 զույգերի ու կունենանք այդքան երեխա:  
Չարց. - Մենք մշակույթի գործիչներս, մեր գլուխը չենք կարողանում պահել:  
Ա.Ա. - Իսկ ես կարծել եմ, թե մշակույթի գործիչները մշակույթն են պահում:  
Չարց. - Մենք կարող ենք երջանիկ ապրել:  
Ա.Ա. - Մարդը չի կարող ամբողջ օրը ուտել-խմել: Խոսքն իմ մասին չէ: Միակ բանը, որ կարող է մարդն անել, դա աշխատելն է: Աշխատեք, որ երջանիկ լինեք:  
Չարց. - Բայց դուք ինչո՞ւ եք ուզում պատգամավոր դառնալ:  
Ա.Ա. - Որ ձեզ իմ ապրելու հոգսից ազատեմ: Հետո, պատգամավորը կամի այն, ինչի համար ուրիշները ճաղերի հետևում կհայտնվեն... Եիշտ ընտրություն կատարեք, իսկ մենք կօգնենք, այնպես կօգնենք, որ դուք չսխալվեք... (Էլի զանգ) Արա, չասի՞ պրյամոյ եթերի եմ... ո՞վ ա... հա՞... գալիս եմ... Ժողովուրդ ջան, կներեք, շեֆն ա եկել... դուք հարցեր տվեք, ես գնացի...

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ



# Ապրում ես իսկապես այն ժամանակ, երբ վայելում ես ժողովրդի համակրանքը

... Ով ցանկանում է ճիշտ իմանալ, թե ինքն ինչ արժե, դա կարող է իմանալ ժողովրդից և, հետևաբար իրեն պետք է համձնի նրա դատին:  
Կ. Զելվիցիուս

Երբ գնում էի Լոռու մարզային հոգեկայանի դաբանական դիպլոմների տնօրեն, մարզի գլխավոր հոգեբույժ, Վանաձորի ավագանու անդամ Գայանե Քալանթարյանի մոտ՝ գրուցելու «Գործարար»-ի համար, մեկ րոպե անգամ չէի կասկածում, որ հանդիպելու եմ մի մարդու, ում կենսական ուժը, ապրելու ու ապրեցնելու շնորհը միշտ հիացրել է զարմացրել է շատ համաքաղաքացիների:

Նրա մասին գրելը և՛ հեշտ է, և՛ դժվար: Զեշտ է, որովհետև բոլորը գիտեն նրան: Դժվար է, որովհետև...

Ամբողջ կյանքի ընթացքում մարդու ստեղծածն ու ձեռք բերածը դեռևս չեն ամբողջականացնում նրա բնութագիրը: Ասում են՝ մարդուն լավ ճանաչելու համար հետը պիտի ծամփա գնաս: Թեպետ երբեմն կարճ մի հանդիպումն էլ բավական է լինում: Այսպես պատահեց նաև սիրված բժշկուհու հետ գրուցելիս:

Անկեղծ ու անշահախնդիր վերաբերմունքը դիմացինի նկատմամբ, վիշտ, թե ուրախություն կիսելու պատրաստակամությունը այս մարդ արարածի հոգու շնայություն մասին են խոսում: Նրա պահվածքի մեջ իր բաժին ճանապարհի հաստատուն գիտակցումն է ընդգծված:

Համզգիտ, խաղաղ, ինչպես հնամյա ասքում, նա տեսնում է վաղվա օրը, և նրա դեմքին նվիրման ու մարդեղության առասպելն է ծփում:

Ոչինչ չի խոսում իր արած գործի, իր բաժին հոգնության մասին: Ոչինչ չի խոստանում, որովհետև հաստատ գիտի, որ իր բաժինը նվիրում է իր ժողովրդին, որ տանում է լուռ ու անտրտուն: Հաստատ գիտի, որ մերձավորի նկատմամբ բարի կամքն է աշխարհը առաջ տանում և երանի նրանց, ովքեր իրենց բարի գործով մասնակից են աշխարհի առաջընթացին:

Հպարտանում ես, որ քո քաղաքում, քո կողքին ապրում է նման մարդ: Հպարտանում ես, քանզի նրա քիստոնեական ու ազգային անշահախնդիր նվիրումը գնահատվում է ըստ արժանվույն, ու նրա ջանքերի արդյունքը դառնում է ոգեղեն արժեքներ, մնայուն ներդրում մեր քաղաքի շարունակվող պատմության մեջ:

Ես էլ որոշեցի Ձեր ուշադրությանը ներկայացնել Գայանե Քալանթարյանի խոհերը՝ կյանքի տարբեր հարցերի շուրջ: Հուսով եմ, որ այս հանդիպումը Ձեզ համար կդառնա «Գործարար»-ի շատ սիրված և սպասվող էջերից մեկը:

- *Ինչպե՞ս եք տեսնում կանանց զուգակշիռ մասնակցության հնարավորությունը քաղաքի տնտեսական ասպարեզում, ընդունու՞մ եք, որ յուրաքանչյուր մարդ, առավել ևս՝ կինն իր առաքելությունն ունի այս կյանքում: Եվ ո՞րն է հայ կնոջ առաքելությունը, միայն մայր լինե՞լը:*

- Մեր փրկությունը բազմազան է, պետք է պահել Հայաստանը, մեր հողի հայկական դիմագիծը: Դրանում իր դերն ունի հայ կինը: Բայց և հայ կինն էլ է ցանկանում ամբողջական դարձնել իր կերպարը՝ որպես կարող ուժ, որպես քաղաքական, տնտեսական պայքարում հասունացած մարդ: Կնոջ մասնակցությունը այդ ասպարեզում ներդաշնակություն է ստեղծում, ապահովում պատասխանատվություն: Օրինակ՝ կանայք պատասխանատու են ընտանիքի, շրջապատի, հասարակության, աշխատավայրի, առողջապահության և այլ սոցիալական հարցերում: Կրթական հարցերի բեռի մեծ մասը կնոջ ուսերին է: Հետևաբար վերոհիշյալ ոլորտում կանանց դերը կարևոր է:

- *Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու*



պատրաստ մարդու ձևավորումը:

- Գաղափարի շուրջ համախմբվելու, երրորդ հազարամյակում մեզ նետված արտաքին մարտահրավերներին դիմակայելու հրամայականն այսօր ավելի քան արդիական է:

Հայ երիտասարդի ձևավորման համար պետք է տազնապել այսօր, քանզի նա մեր ապագան կերտող քաղաքացին է, որի միտքն ու հոգին պետք է ամբողջովին ձեռքազատված լինի սեփական երկրի ժամանակավոր ու անխուսափելի դժվարություններից. ասել է հայրենիքն ու ծննդավայրը դյուրությամբ լքելու աղետից ու գաղթից:

Շատ կարևոր է երիտասարդության առողջ ապրելակերպի պատասխանատվության զգացումը, ազնվությունը, առողջ գաղափարի շուրջ միավորումը: Այս գործի առաջընթացի կարևոր տարրերից է կուռուպցիայի նվազեցումը:

Երիտասարդներին հայրենասիրություն պետք է ներարկել զգույշ: Քաղաքացին առաջին հերթին պետք է հարգի իր պետությունը: Մենք ունենք պետություն, և միատարր ազգ ենք: Սա է մեր հողը, որ կոչվում է հայկական հող, և պետք է հայկական էթնոսը պահպանենք: Ազգասիրությունը սկսվում է պետականության գաղափարից, որովհետև ազգի կազմակերպման բարձրակետը պետությունն է:

- *Այսպիսի մի համոզմունք կա, որ յուրաքանչյուր մարդ իրենից հետո սեփական ձևն ունեցող հետք է թողնում:*

- Հետքը անհատականություններին է վերաբերվում, կա հասարակություն, և կան անհատականություններ, այդպես չէ՞: Կան մարդիկ, որ նմանվում-նմանակում են ուրիշների, սկսում են ապրել նրանց նման: Փորձում են նմանվել ու կորցնում են իրենց «ես»-ը, այդ մարդիկ ծուլվում են հասարակությանը ու չեն կարող հետք ունենալ: Այլ է անհատականությունը:

- *Դժվար է, իհարկե, լրագրողի հետ անկեղծանալ: Ամեն դեպքում, Ձեր կյանքի հիմնական հավատամքը:*

- Հավատը բարու և սիրո: Հետո համբերությունն ու համբերելը: Երբ այդ համբերությունը լինում է, չկա մի բան, որ մարդ չկարողանա անել, չկա մի բան, որին մարդ ձգտի ու չհասնի:

- *Մի հարց, որը երևի թե շատերին կհետաքրքրի. Ի՞նչ է Ձեզ համար հաջողությունը: Կարո՞ղ եք հաջողության բաղադրատոմս տալ:*

- Հաջողությունը ինձ համար հաղթանակն է՝ առանց որևէ մեկի հաշվին պարտություն գրանցելու: Իմ հաջողությունը իմ ընտանիքն է, իմ հաջողությունը այն սերն ու հարգանքն է, որ վայելում են: Բաղադրատոմսը, ինձ թվում է, առաջին հերթին նպատակն է ու նպատակամղվածությունը: Հաջողության հասնելու ճանապարհին շատ բաներ կան, օրինակ՝ համբերությունը մեծագույն հատկանիշ է, որ մարդ, եթե ունի, հասնում է հաջողության: Համբերությունը մեծագույն հատկանիշ է, որ յուրաքանչյուր մարդ պետք է դաստիարակի իր մեջ: Եվ, իհարկե, նորից եմ կրկնում նպատակամղվածությունը, ոչ թե միջոցների առջև կանգ չառնելով, այլ օգուտագործելով սեփական խելքը, համբերությունը:

Ի դեպ, շատ կարևոր է նաև մարդկանց սիրելու, գնահատելու շնորքը, որովհետև միայնակ հաջողության չեն հասնում երբեք:

- *Ի՞նչ հարցի շուրջ Դուք կուզեիք խոսել:*

- Կուզեի խոսել մի շատ կարևոր հարցի շուրջ, որ մեր օրերում խառնաշփոթ իրավիճակում է: Դա մարդկային փոխհարաբերությունների միմյանց նկատմամբ վերաբերմունքի, հանդուրժո-

# «ՑՈՐԵՆԻ» ԱՅՍ ՀԱՏԻԿԸ ԾԻԼ ԿՏԱ

2007թ. հուլիսին Վաշինգթոնում կկայանա արվեստի միջազգային հիմնադրամի (International Children's Art Foundation) կողմից կազմակերպվելիք թվով III-րդ մշակութային օլիմպիադան - մանկական ստեղծագործության ամենախոշոր ու հեղինակավոր մրցույթը աշխարհում:

Առաջին անգամ այդ մրցակցությանը կմասնակցի և Հայաստանը: Երևանում «Նարեկացի» արվեստի կենտրոնում անցկացված հանրապետական կերպարվեստի ազգային օլիմպիադա - 2006-ի ստեղծագործական ժյուրիի միանձնյա քվեարկությամբ մեր հայրենիքը ԱՄՆ-ում կներկայացնի Վանաձորի գեղարվեստի դպրոցի սան, 11-ամյա Անժելա Գրիգորյանը:

Շնորհալիությունը (Անժելայի մասին չեմ վախենում ասել նաև տաղանդը) հաճախ ի հայտ է գալիս մանուկ հասակում: Ավելի ծիշտ կլինի, եթե ասվի, որ դա ազգային խորը արմատն է, որ մեր մշակութային ծառի վրա արտահայտված գույներ, տաղանդներ է ստեղծում:



Անժելա Գրիգորյանի այս աշխատանքը Ազգային օլիմպիադա - 2006-ում գրավել է առաջին տեղը:

**7** *Ապրում ես իսկապես այն ժամանակ, երբ վայելում ես ժողովրդի համակրանքը*

դականության ու կարեկցանքի մասին է, որոնք մեր օրերում «թարգմանված» են սեփական հայեցակետերով: Վերծանել այն պետք է միայն մեկնելու նկատմամբ սիրո ուժով, արժևորել է պետք այդ հատկանիշները: Հարկավոր է լիցքավորել դրանցով, քանզի մեր բարոյական օրենքները օրորոցից են կյանք մտնում, հայ ոգին այն ոգին է, որ սերմանվել է աստվածաշնչյան նյութով:

- *Տիկին Քալանթարյան, շնորհակալ և բավարարված եմ: Վաստակած իրավունքով Ձեր ազգանվեր առաքելությունն իրականացնելիս ծագած հարցերն էլ ցանկացած ժամանակ Դուք կարող եք ուղղել «Գործարար» ամսագրին:*

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Վանաձոր - Կալուզա

Անժելան լիարժեքվում է գեղեցիկով: Աստժո կամոք գեղեցիկը, վեհը նրա աչքին տեսնող հայացք է տալիս, ձեռքին ստեղծագործման խոյանք: Գեղեցիկը նրա մեջ թրծում է ապագա հայ նկարչուհուն, մաքրում նրան թերարժեքության զգացմունքներից ու օգնում կանգնել սեփական ուղու վրա:


Ահա թե ինչպես է Անժելայի հաղթանակին արձագանքում իր էջերում «Գոլոս Արմենիի» թերթը.

«Рисунок Анжели привлекает не по-детски глубокой мыслью: Весь мир - это шахматная доска, на которой человечество состязается на право первенства. Кто ленив, глуп и зол, не выдерживает сложных шахматных правил выбывает из игры. Остальные движутся вперед, питаюсь дойти до вершины земного шара и некоторым даже удается взобраться на несколько ступенек. Но никто не подозревает, что там, наверху, уже развеивается армянский флаг водруженный нашими шахматистами. «И снова победили шахматы!» - с гордостью заявил гроссмейстер Смбагт Лпутян, мгновенно откликнувшийся на предложение центра искусства «Нарекаци» принять участие в объявлении итогов конкурса».

Որևէ անբնական բան դուրս է նրա սեփական աշխարհից, ուր տիրում է միայն մանկական ջինջ հոգեբանություն, բյուրեղյա մաքրություն, նրա նկարներում հստակվում ու պարզվում է մանկական հոգու ապրումն ու ընկալումը:

Արվեստը զարմանահարաշ աշխարհ է: Ստեղծագործողը միշտ ձգտում է ստեղծել





սեփականը, իր հեքիաթը: Ահա Անժելան էլ իր հաղթանակած նկարում պատկերել է կյանքը տեսնելու սեփական հեքիաթը: Կյանքը, առավելապես արվեստը այս աղջնակի մոտ որոնումների ընթացք է:

Անժելայի ներքին հայտնությունը նկարներում իրերի ու երևույթների նախախնամությամբ վերածվում է խորհրդանիշների անհատական մեկնաբանության ինքնատիպ դրոշմով:

«Գործարար» ամսագրի ողջ աշխատակազմն ու նրա հազարավոր ընթերցողները շնորհավորում են Անժելային լուրջ հաջողությունների համար, ցանկանում նոր բարձունքներ առաջիկա փառատունում: Չէ որ Վաշինգտոնում նրան հարկ կլինի մրցակցել ավելի քան 100 երկրների շուրջ 3 միլիոն պատանի նկարիչների բանակի հետ:


Անվերապահորեն կարելի է ասել, որ Անժելան իր ասելիքն է բերելու հայ նկարչությանը՝ «ցորենի» այս հատիկը անպայման ծիլ կտա:

*Արսեն ՌԱՖԱՅԵԼՅԱՆ,  
ՀՀ նկարիչների միության անդամ  
Վանաձորի գեղարվեստի դպրոցի տնօրեն*



*Լուսանկարները՝ Էմիլ ՅԱՎՐՅԱՆԻ*

### ԴԱԼԱՅ ԼԱՍԱ 14-ՐԴԷ



«Ժամանակակից աշխարհը, ի տարբերություն անցյալի, այս կամ այն չափով ճանաչում է առանձին վերցված յուրաքանչյուր հանրակցության, այդ թվում բնիկ ժողովուրդների ազգային և մշակութային ինքնությունը պահպանելու իրավունքը: Հայաստանը բավական մեծ երկիր է, մեծ հանրություն հնագույն պատմությամբ: Անկասկած, դուք իրավունք ունեք պահպանել ազգային ինքնությունն ու մշակույթը», - այս մասին ասել է Դալայ լամա 14-րդը պատասխանելով «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի թղթակցի այն հարցին, թե արդյոք Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն ու դատապարտումը անհրաժեշտ պայման չէ՞ մարդկության հետագա զարգացման համար:

«Ինչ վերաբերում է անցյալում տեսած ձեր տառապանքների... Այսօր կոնֆլիկտների (այդ թվում այն կոնֆլիկտների, որոնք անցյալում թույլ տված սխալների հետևանք են) լուծման լավագույն միջոցը հաշտության ոգով երկխոսությունն է: Եվ այստեղ հատուկ նշանակություն ունի ներելու կարողությունը: Դա չի նշանակում մոռանալ անցյալում կատարվածը: Հիշեք ձեր տառապանքների մասին, թող մյուսներն էլ իմանան դրանց մասին, բայց միաժամանակ սրտում չարություն մի պահեք», - խորհուրդ է տվել նա, նշելով, որ առավել նպատակահարմար է նոր իրականությանը համապատասխան փոխընդունելի լուծումներ մշակել:

Թղթակիցը նրան հարց է ուղղել նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին, թե արդյոք սնանություն տեսնո՞ւմ է դարաբաղյան և տիրեթյան հարցերի միջև: «Լսել եմ Լեռնային Ղարաբաղի մասին, սակայն մանրամասներին ծանոթ չեմ: Ամենայն հավանականությամբ, սնանություն պետք է լինի, բայց պետք է լինի նաև տարբերություն»:

Ինչ վերաբերում է ազգային ինքնորոշմանը, ապա Դալայ լաման նշել է, որ դա շատ կարևոր է. «Ազգերի ինքնորոշումը և մշակութային ժառանգության պահպանումը կարևոր է: Չէ՞ որ մշակութային ժառանգությունը ձևավորվել է էվոլյուցիոն զարգացման ընթացքում, և այն համապատասխանում է որոշակի մարդկանց պահանջներին», - ասել է նա:

# Գագիկ Անտոնյանը իր երգիծանքով

## Մամ, ես սկեցի

*Հագարավոր ծնողներ հեռուներում ապրող զավակներից լուրի են սպասում՝ սրտատրոփ: Երբեմն նաև այսպիսի զանգեր են ստանում:*

Մամ, դո՞ւ ես... Բարև, մամ: Տեղդ հոցուրտ չի... Մինուս քսան: Տնաշեն, բա դա ցո՞ւրտ ա: Լսեցի՝ մինուս երեսուն ա: Ի՞նչ: Դրսո՞ւմ է: Ինչի՞ ես հագում, այ կնիկ: Փետ չկա՞ վառես: Բա թոշակդ չավելացրի՞ն: 5-6 կուբ փետոս ի՞նչ ա, որ չես առնում: Փող չկա՞: Ադե՛, պետություն չի, էլի... Իրա թոշակառուին էլ չի կարճ պահի... Ես ո՞նց եմ... Ինձ ի՞նչ ա եղել որ... չէ, ի՞նչ մրսած: Ընդհակառակը՝ քրտնած եմ: Տղերքի հետ սաունայում եմ: Չէ՛, ի՞նչ սա ու նա, մեր տղերքն են: Սաունա՞ն... բաղնիքի պես մի բան ա: Բայց բաղնիք չի: Կառոչե, կայֆ ա՛... Էնքա՛ն փիստներ կան: Հեջ, մասած են անում: Մի հատ դրկե՞մ: Ինչի՞դ ա պետք: Էդ ինչի՞ ես ուտելիքը շաղ տալիս, որ մկները լցվեն: Մերա, սրանք անկուշտ են, ինչքան տաս՝ կասեն քիչ ա... Վերջն էլ մոտիցդ ուրիշի մոտ կփախչեն... Կառոչե, հարմար չի... Էլ չասես, ես էրտեղ եկողը չե՛մ... Սաղ շուստրի են, անհավատ: Գամ ո՞ւմ խաբեն... Չէ՛, էստեղ մոտս են գալիս ու խաբվում: Էն օրը մի ավտո ծախեցի: Չէ, հա՛, ինձ չէր: Ես ի՞նչ իմանամ ումն էր: Կայնած էի, մեկն եկավ, թե են ավտոն քո՞նքն ա: Ասի՛ հա: Ասավ՝ ծախի: Ես էլ ծախեցի: Գնաց, որ տանի... գյուլլեցին: Երևի ավտոյի տերերը: Չէ՛, ինձ բան չասին... ցլրկվեցի: Հիմի՛... Կանաչի են ծախում: Չէ՛, հա... բազարում: Բա ես բազարի տղու վիդ ունե՞մ... Բիրիքով բերում ենք, բիրիքով տալիս ենք: Աֆղանստանից են բերում: Երևի համ համով ա, համ օգտակար, որ տանում են: Ինձ որ՝ շա՛տ օգուտ ա տալիս: Թագա գործ են սկսել: Երեկ 10 հարկանի շենքի 11-րդ հարկը ծախեցինք: Ո՞նց թե սա երկիր չի: Կարգուկանոն չկա՞: Կա,



ո՞նց չկա: Բա Պուտինն ի՞նչ բանի ա: Կարգուկանոնին լավ էլ նայում ա... Անկարգության հետ գործ չունի: Մամ, չեմ կարա: Իմ արև, դաժե՛ 10 օրով չեմ կարա: Տակս փախած ա՛... դու գիտե՞ս՝ ինչքան ծախսեր կան: Ամեն տեղ փող հա՛ փող... Օրինակ՝ էս գայրը: Կայնցում են ու թե՛ ո՛ր ա ապտեչկեղ: Ասում են, արա, հո հիվանդ չե՛ք, գնա՛ մ բժիշկ բերեմ: Ասում են՝ կարգ է: Կամ էլ կրակմարիչ են ուզում: Շատացրել են: Կառոչե, սրանց խաթրու հմի շտապօգնության, պաժառնի ավտոները ետևիցս ման են ածում: Տո, լավ են, սրանց ի՞նչ ա եղել: Թող մեծանում ա: Եսիմ ի՞նչ են սովորեցնում: Երբ հարցնում են, ասում ա՛՝ կիսատա մնացել, էգուր էլ են կանչել: Տենա՛ս ոնց ա օգնում: Աղբն արդեն իրա վրա յա: Ավտոյի տակ խի՞ պտի ընկնի, պատուհանը բացում ա ու՝ շը-րը՝-ը՛ փ, ներքև... Հարսիդ ի՞նչ ա եղել: Իրա համար լենքին ա

տալիս: Ավտոյով իրա համար ֆոֆոում ա: Տներում: Բա ո՞նց, դրա համար է հաստանում: Տարա, ո՞նց չտարա: Բժիշկն ասավ՝ մի ամսում 20-25 կգ կնիհարի: Բա ո՞նց չնիհարեց: Մի ամսում 30 կգ նիհարեց: Բժիշկն, էլ ո՞վ: Ախորժա՞կ: Ախորժակին ախորժակ չի հասնի: Շնաձկանս չափ ուտում է: Էդ էլ քիչ չի՝ շանս հավերիս խեթ-խեթ ա նայում, փալիքը թափում... Մի օր կոկորդը կպատռի՛... Հարսդ չէ, շու՛ւնը: Շնաձուկը որտեղ են պահո՞ւմ: Ակվարիումում: Տենանք, տղերքը մի կետ են խոստացել. ո՞նց ենք մեջը գցելու: Այ մամ, զբաղմունք ա, էլի՛... Ի՞նչ, կնոջովս զբաղվե՞մ: Այ կնիկ, գոնե զանգես, հարսիդ ասես՝ ինձ հանգիստ տա, ասում ես՝ իրանով զբաղվե՞մ: Ինչ ա եղե՛լ: Խանդում ա: Ասում ա՛՝ սիրուհիներ ունես: Ես երգվում եմ, որ դրանց միջից ամենաշատը իրան են սիրում, չի հավատում: Բա ես ի՞նչ անեմ: Էն օրը գուշակի մոտ էի, ասավ՝ կնիկը կթունավորվի: Փող տվի, ասի՛՝ գուշակիր ինձ կբռնե՞մ... Այ մերա, սուս, կրակն են ընկել: Առաջ, որ իմանում էի հաջող ամուսնություն կա, նախամծում էի, իմ արևը: Հմի որ հաջող բաժանություն եմ իմանում, էլի նախանծում եմ: Կառոչե, հարսիդ էստեղ շա՛ջ հայ են ասում: Մամ, իմ արև, սխալվում են: Հարսդ, Նատաշան, դու էլ գիտես, հայ չի, ռուս ա... Մամ, հայերին չեն քշի, դու՛ հանգիստ: Բլեֆ ա... Որ քշեն, բա սրանց փողոցներն ո՞վ կմաքրի, աղբն ո՞վ կտեղափոխի, կանախագիսան ո՞վ կբացի, փողոցն ո՞վ ասֆալտ կանի, գոն կարքի, խոզ կպահի, ո՞վ, հը՞... Կառոչե, ձևեր են թափում: Էդ հեջ: Հմի մեճակ քո մասին են դարդոտել: Մեճակ մեղք ես: Երևի էս երկու օրը գամ՝ մի բան անենք: Դե, ի՞նչ պիտի անենք, Քոչարյան Տիգրան մեր ընկերո՞ւ ա, դու էլ ես մտածո՞ւմ... Կգա՛մ, կգա՛մ... Որ չգամ, Տիգրան կասի՛՝ ծախսից փախա՛վ... Տիգրան էլ չգիտե՛ս... ծերերի մանկապարտեզի չե՛քն ա՛, չե՛քը... Մամ, կառոչե, թագա տարիդ շնորհավոր, ես խեղդվեցի, ջուրն են սկում... Հաջող, մա՛ամ, ես սը-կե՛ն-ցի՛ի՛...

## Իր հումորով

Բժշկի մոտ 80-ամյա ծերունին դժգուհում է.  
- Բժիշկ ջան, ծախ անջակս (ականջ) լըսըմ չի:  
- Պապի, ծերությունից է, դարդ մի արա:  
- Այտա, ուրեմն աջս ծախից ջախել ա՞...

\*\*\*  
*Ինչի՞ համար է արևը:*  
Ուսուցչի այս հարցին աշակերտն արագ պատասխանեց.  
- Երդվելու՛...  
\*\*\*

*Կրճարներ ուրիշ ամուսին*  
Մի տղամարդ խանութում երկար չարչարվում է կնոջ համար նվեր գնել, չի կողմնորոշվում: Դիմում է վաճառողուհուն.  
- Եթե իմ կնոջ տեղը լինեիք, ի՞նչ կընտրեիք, տիկին:  
- Ուրիշ ամուսին:

\*\*\*  
*Հիմար լինել պարտադիր է*  
- Դու որտե՞ղ ես ուզում ծառայել:  
- Գլխավոր շտաբում:  
- Հիմա՞ր ես, ի՞նչ է:  
- Իսկ դա պարտադիր է:  
\*\*\*

*Հայր ու որդի*  
- Հայրիկ, ինչո՞ւ չի կարելի այս ֆիլմը դիտել:  
- Բայես, խելոք կողքիս նստիր, հիմա կտեսնես:  
\*\*\*

*Մի երեկո էլ չեկավ*  
Ջրուցում են երկու ընկերուհի:  
- Պատահե՞լ է, որ ամուսինդ երեկոյան չա:  
- Ընդամենը մեկ անգամ:  
- Օ՛, որքան երջանիկ կին ես դու, և հետո՞: Չասա՞ց, թե ինչ է պատահել:  
- Ոչ:  
- Չե՞ս հարցրել:  
- Դե՛ն չի եկել:

## Իր աֆորիզմներով

❖ Չկա մի լուսավոր միտք, որ չկարողանանք արտահայտել հայիոյանքով:  
❖ Երջանկությունը փողի մեջ չէ: Երջանկությունը փողի քանակի մեջ է:  
❖ Քաղաքապետն ընտրեց օգնական և ընկավ անօգնական վիճակի մեջ:  
❖ Բոլոր առողջ մարդիկ վատ հետազոտված հիվանդներ են:  
❖ Երբ կինը լուռ է, չի խոսում, չի հակառակվում, լավ նայիր, քնած չէ՛:  
❖ Մարդու ամենամեծ սխալը ամուսնանալն է: Լավ է, որ դա արվում է ընդամենը մեկ անգամ:  
❖ Բնակիչների 5 տոկոսն ամեն ինչ ունի: Մնացածն էլ ունի այն մնացածը, ինչ թողել է այդ 5 տոկոսը:  
❖ Խելացի են այն կանայք, որոնց մոտ կարող են քեզ հիմարի պես պահել:  
❖ Եթե փողը քեզ չի ուրախացնում, ուրեմն այն ուրիշինն է:  
❖ Երբ չիմացիք սովորեն ուտել պատառաքողով, աշխարհում սով կսկսվի:  
❖ Կնոջ ցանկությունը օրենք է, տղամարդունը՝ հողված:



# Երբ գիրքը չի մեռնում

Մեր ժողովրդի մեծամասնությունը հավատացած է, որ աշխարհն անարդար է ու չար, և որ անիրավները անպատիժ կարող են ծաղկել և բազմանալ: Այդպես է մեզ ուսուցանում մեր պատմության մեկնաբանությունը, այդպես է մեզ դաստիարակում մեր ավանդական գրականությունը, այդպես են մեզ կյանք սովորեցնում մեր պապերից ու ծնողներից շատերը: Արդարության ու բարության նկատմամբ հավատի պակասն այնքան է արմատավորված մեր գիտակցության մեջ, որ նույնիսկ իմաստության կնիք կրող ասացվածքներ են ձևավորվել, ու հին ասացվածքներն էլ վերածնվել են: Յուրաքանչյուր հայ գոնե մի անգամ իր կյանքում ասած կլինի, որ «լավություն անողի գլուխը ծակ է», կամ թե «լավություն արա ու գցիր ջուրը»: Ասել է թե՛ լավություն մի արա և բարի մի եղիր, թե՛ չե՛ սխալ կարդես և շահելու փոխարեն կկորցնես: Եթե մենք գտնում ենք, որ լավությունը կորչում է, սա բնականաբար և տրամաբանորեն պետք է հանգեցնի այն համոզմանը, որ չարությունն էլ կարող է անհատույց մնալ, և ահա քեզ անարդար աշխարհ: Իսկ եթե անարդարությունն ու չարությունը կարող են հաղթանակել, ապա ուրեմն ինչո՞ւ գուր ջանք թափել ու առողջություն մաշել, անգամ կյանք գոհել արդարության ու բարության հաստատման համար, եթե դա բարեկեցության ու երջանկության հասնելու միակ երաշխիքը չի համարվում: Շատ ավելի հեշտ է և թերևս ավելի նպատակահարմար անարդարությունը անարդարությամբ փոխարինել և անօրինությանը անօրինությամբ պատասխանել: Կարևորը տվյալ պահի ներքին բավարարվածությունը ձեռք բերելն է և թվացյալ հաջողության հասնելը: Մանավանդ եթե վստահ ենք, որ հաշվետվու-

թյան խնդիր չկա, և պատասխանատվությունից էլ կարելի է միշտ խուսափել: Պատկերացնո՞ւմ եք, թե թևածող այս մտայնությունը ինչ սարսափելի ավերներ է գործում մեր հոգեբարոյական շերտերում: Նախ ինչո՞ւ է լավություն անողի գլուխը ծակ: Ի՞նչ է, լավությունն էլ առևտուր ու հաշվարկ է, և անողը ամպայման սպասում է փոխադարձ հատուցման: Մենք հպարտանում ենք առաջինը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած լինելով ու աշխարհին ստիպում գլուխ խոնարհել մեր առաջ, իսկ ինչո՞ւ ենք մոռացել ավետարանական պատգամը՝ թող քո աջ ձեռքը չիմանա, թե ինչ է անում ձախը: Ախր, ամբողջ հարցն այն է, որ իրականում հատուցումն իսկապես գալիս է (նույնիսկ շահանդը բարերարների համար), բայց ոչ այնտեղից, այն պահին և այն տեսքով, որ սպասում ենք, և քանի որ չենք հավատում այս ճշմարտությանը, ուստի չենք հասկանում աղբյուրը: Այդ պատճառով էլ վիրահատել ենք երկրորդ ասացվածքի իսկական վերջաբանը՝ լավությունը թեկուզ գցես ջուրը՝ միևնույն է, չի կորչի: Ըստ Լոմոնոսովի՝ աշխարհում ոչինչ երբեք չի կորչում, այլ փոխակերպվում է: Սա բնության օրենք է: Իսկ ինչո՞ւ ենք կարծում, թե բնության օրենքները միայն նյութին են վերաբերում, և կամ թե՛ նյութը միայն առարկայական դրսևորումներ ունի: Եթե մի պահ ընդունենք այս ու սկսենք հայտնի ասացվածքը ճիշտ արտահայտությամբ օգտագործել, աստիճանաբար կհանգենք այն եզրակացության, որ չարությունն էլ աննկատ ու անպատիժ չի անցնում, և որ ամենայն ինչ վերջիվերջ վերադառնում է ի շրջանն յուր: Մենք հազարամյա մշակույթի բարձունքից մեծամտաբար ծաղրում ենք ժամանակակից ամերիկյան

գրական-գեղարվեստական միտքը, ուր ամեն ինչ վերջանում է «հեփփի էնդով»: Իսկ նրանք դրան լուրջ են վերաբերվում և սերունդ են կրթում լենինյան մոնումենտալ պրոպագանդայի ամենախիսկական շնչով: Նրանք Հին աշխարհին են վերադարձնում իր սեփական պատմությունը իրենց հեփփիէնդյան ընկալմամբ և նույնիսկ ամենաօրհասական, տխուր ու սարսաղի դրվագները կարողանում են մատուցել ՕՔեյական լուսավոր լավատեսությամբ: Նրանք նույնիսկ ավանդական հին հեքիաթներն են վերաշարադրում և շարունակություններ հորինում: Խատկապես երեխաների համար անարդար ու տխուր վերջաբան չպետք է գոյություն ունենա: Մանուկները պետք է մեծանան հավատալով արդարությանն ու բարությանը: Ամերիկացիները մեր նրաբաղաբակիրք ու գերինտելեկտուալ քիմքի համար պրիմիտիվ բարոյականությամբ ու աշխարհամաշողությամբ ազգ են կերտում ու հզորանում նաև մեր անհավատության ու փչացածության հաշվին: Իսկ մենք դեռ զայրացած «Պեպո» ենք բեմադրում, «Գիքորով» ու «Մարոյով» մեր մանուկներին մոլորեցնում (մեր մեծերը ինձ կհասկանան ու կներեն), կամ էլ լավագույն դեպքում մվնվում աշխարհի անարդարությունից ու մեր չար բախտից ու չենք հասկանում, որ շարունակելով աշխարհը անարդար ու չար համարել՝ աշխարհն էլ շարունակելու է մեզ նույն ձևով վերաբերվել: Ինչ ցանում ենք, այն էլ հնձում ենք: Սա էլ է բնության օրենքը, Նյուտոնի երրորդ օրենքը: մարմինները փոխադարձ հրվում են նույն ուժով, ինչ ուժով հրում են:

Նազենի ՂԱՐԻԲՅԱՆ ԴԵ ՎԱՐԴԱՎԱՍ

## Ոչ թե մամլո, այլ՝ մամուլի

«Մամուլ» հին հայերեն նշանակում է ճնշելու, ճզմելու գործիք: Տպագրության գյուտից հետո դարձել է տպագրական տերմին, և դարձել պարբերական հրատարակությունների ընդհանուր անվանումը: Թարգմանված է եվրոպական լեզուներից, որտեղ press-ը «սեղմում, սեղմելու գործիք» իմաստից ձեռք է բերել «տպագրության գործիք, տպագրություն, հրատարակություն, պարբերական մամուլ» և այլ նման իմաստներ: Մամուլը ներկայումս առավել հաճախ օգտագործվում է հենց «տպագիր պարբերական» իմաստով, որը բառի նոր, հնից նշանակալիորեն տարբերվող իմաստն է: Մամուլ բառի արևելահայերեն սեռական հոլովածն է մամուլի: Ըստ այդմ, պետք է լինի Մամուլի տուն, մամուլի ասուլիս, մամուլի քարտուղար, մամուլի տեսություն և այլն: Ժամանակին հենց այդպես էլ ասվում և գրվում էր: Ամեն ինչ փոխվեց, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը, իր նախագահության օրոք, որպես հին հայ լեզվի և մշակույթի գիտակ, իր ելույթներից մեկում օգտագործեց մամլո ձևը: Այն իր գրաբարյան արխիվի հնչմամբ հիացմունք պատճառեց իշխանամետ հայ լրագրողներին, որոնք դրանից հետո համարյա մոռացան նախկին մամուլի սեռականը և գլխավոր անցան «մամլո» ձևին մամլո ասուլիս, մամլո քարտուղար, մամլո ծառայություն և այլն: Ըստ Նոր հայկազյան բառարանի, գրաբարում մամուլ բառի սեռականն է մամլոյ, ժամանակակից ընդունված արտասահմանությամբ մամլո: Նմանօրինակ գրաբարյան ձևեր, իհարկե, էլի կան և կիրառվում են, օրինակ՝ «ձայն բարբառո համապատի»: Սակայն նման արտահայտություններն օգտագործվում են որպես մեջբերումներ, որպես քաղցած արխիվներ: Բայց մամլո ասուլիսը կամ մամլո տեսությունը

մը մեջբերումներ չեն: Չէ՞ որ մամուլը «տպագրություն, պարբերական հրատարակություն» իմաստով, բուրբուլիկ էլ հին երևույթ կամ քարացած արխիվն է: Իսկ մամլո քարտուղարը այնպես է հնչում, ինչպես, ասելը, գինյո կոմբինատը, գաղտնի գործարանը: Այսպիսով, մամլոն անլուրջ մի ձև է, որի կիրառությունը մամուլում պետք է վերացնել:

Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, բան. գիտ. դոկտոր

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ «ԱՆԳԼԵՐԵՆՈՎ»**

Հայր Գրիգոր Մաքսուտյանի հեղինակությամբ առաջին անգամ անգլերեն լեզվով Մ. Նահանգներում լույս է տեսել հայկական այբուբենի և գրականության ծագման մասին պատմող հանրամատչելի մի գիրք, որն օտար ընթերցողներին պետք է ծանոթացնի մեր պատմության մեջ այդ կարևոր իրադարձության հետ, հաղորդում է ճանաչված լրագրող Ֆլորենս Ավագյանը Նյու Յորքից:

«Մեր այբուբենն ու լեզուն, ինչպես և մեր հավատը, բնորոշում են մեր ինքնությունը: Ես շնորհակալություն եմ հայտնում Հայր Գրիգոր Մաքսուտյանին այս ծրագրի վրա աշխատելու և նման բժախնդրությամբ հոյակապ մի գրիք գրելու համար», մշել է այդ առթիվ Մ. Նահանգների հայ եկեղեցու արևելյան թեմի առաջնորդ Խաժակ աբբ. Պարսամյանը, որի նախածննդությամբ էլ ստեղծվել է այդ հատորը:

# ԵԶՐԱՍ ԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆ. ՀԱՎԱՏՔԸ ՆՈՒՅՆՆ Է, ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ-ԻՆՉ ԱՅԼ

Թվում է՝ Մոսկվայում կառուցվող եկեղեցական պատկառելի համալիրը պիտի կլանի հայ եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Եգրաս սրբազան Ներսիսյանի ողջ եռանդն ու ուշադրությունը նրա հոգևոր առաքելության ներկա փուլում: Սակայն միայն այս տարի իր թեմի տարածքում նա օժն է հինգ հայկական եկեղեցի: Արդյոք մանրո՞ւք է, ասենք, որ նրա օրհնությամբ և օժանդակությամբ հրատարակվել է սքանչելի մի այբբենարան՝ նախատեսված հատուկ ռուսահայ մանուկների համար: Ի դեպ, առաջինը տեղի գաղթօջախի կյանքում: Պետք է միայն տեսնել այդ ձեռնարկը Մոսկվայում սրբազանի բացած հայեցի դաստիարակության կենտրոնում մայրենի լեզուն սովորողների աշակերտական սեղանին...

Սակայն հոգևոր ու աշխարհիկ իմաստով ռուսահայության համար և առհասարակ ռուս իրականության մեջ նշանակալի իրադարձություն դարձավ Մաղաքիա Օրմանյանի «Հայոց եկեղեցի» շքեղագարդ աշխատության լույս ընծայումը ռուսերեն, որն անդրանիկ խոշոր փորձն է այս երկրում ներկայացնելու մեր հոգևոր պատմության ամփոփ տարեգրությունը:

- *Հարգելի սրբազան, ի՞նչը դրդեց ձեզ դիմել այդ գրքին:*  
 - Ռուսահայության մեջ և ընդհանրապես Ռուսաստանում անհրաժեշտություն էր զգացվում տալու Հայ առաքելական եկեղեցու և նրա պատմության հստակ ու ամբողջական պատկերը: Նա այն եկեղեցին է, որ 1700 տարի անդավաճան ծառայել է Քրիստոսին, լծվել նրա պատգամների իրագործմանը: Եվ նրա առաքելությունը վկայում է, թե ինչքան զորավոր է քրիստոնեական հավատքը, որին նվիրաբերվելով մեր ժողովուրդը դիմակայեց ու հաղթահարեց ժամանակի փորձությունները:


Այս գիրքը հայ եկեղեցու առաջին լիարժեք տարեգրությունն է ռուսերեն: Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանն ավելի վաղ խնդրին անդրադարձել էր իր հեղինակած մի գրքուկով:

- *Իսկ ինչո՞ւ հենց Օրմանյանը: Հայտնի է, որ նշանավոր կրոնական գործիչը, աստվածաբանը, պատմաբանը բազմաբեղուն գործունեություն է ծավալել անցած վերջին երկու դարերի սահմանագծին, գիրքը մոտ 100 տարվա պատմություն ունի: Մինչդեռ մեր ժամանակներն այնքան սրընթաց են, որ նույն արագությամբ փոխվում են նաև շատ պատկերացումներ: Ժամանակափոխության հետ կապված մտավախություններ չե՞ն եղել Ձեր մեջ:*

- Բնավ: Օրմանյանը հսկա միտք էր մեր ժողովրդի և հատկապես եկեղեցու պատմության ուսումնասիրման ասպարեզում: Ժամանակին մե էլ էր հետապնդել նույն նպատակը՝ օտարին ներկայացնել ներ անցած հոգևոր ճանապարհը. գիրքն առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերեն: Այնպես որ մեր կողմից նույնիսկ ծանոթագրություններ անելու անհրաժեշտություն չառաջացավ:

- *Սրբազան, ելնելով թեմայից, ահա թե ինչ կուզենայի պարզել. մենք ապրում ենք Ռուսաստանում, և ռուսները հետաքրքրության համար մեզ հաճախ են հարցնում՝ աստվածաբանական բնույթի սկզբունքային ի՞նչ տարբերություններ կան մեր երկու քրիստոնեական եկեղեցիների միջև:*

- Ամիջապես ասեմ՝ հավատքի իմաստով՝ սկզբունքային ոչ մի տարբերություն: Փոքր-ինչ այլ է աստվածաբանությունը: Ի դեպ, Օրմանյանն էլ է տալիս այդ հարցի պատասխանը: Հայ եկեղեցին աշխարհի հնագույն քրիստոնեական եկեղեցիներից է, իր նկարագրով, պատմությամբ խորապես ազգային: Քրիստոնեական եկեղեցիների մեջ նա ուղղափառ է, սակայն այդ ուղղափառությունը չպետք է ընդունել հույն օրթոդոքս եկեղեցու աստվածաբանական սահմանների մեջ. մենք ինքնանկախ ենք: Մեր աստվածաբանությունը հենվում է առաջին տիեզերական երեք ժողովների վրա, որոնց գումարման ժամանակ քրիստոնեական եկեղեցին տիեզերական էր՝ ընդհանրական, տակավին չպառակտված: Ըստ այդ ժողովների սկզբունքների ու մեկնաբանությունների հիման վրա ձևավորված աստվածաբանության, Քրիստոսի մեջ մարդկային և աստվածային ներկայությունը մասեր, սկզբունքները, անբակտելի են, անփոփոխելի: Քրիստոսն այնքանով, որքանով մարդ է, նույնքանով էլ՝ աստված, որովհետև աստված մարմնավորվեց Քրիստոսով:



Չի կարևորվում որևէ սկզբունքի առաջնայնության հարցը: Ողջ աստվածաբանությունն ու քրիստոսաբանությունն ամփոփվեց հիշյալ ձևակերպմամբ՝ «մի է բնութիւնն բանին մարմնացելոյ» (մարմնացյալ բանի մեջ բնությունը մեկն է): Այսինքն՝ մեկ բնության մեջ ընդունում ենք և մարդկային, և աստվածային սկիզբը, դրանք չառանձնացնելով որպես բնություններ: Մինչդեռ 451 թ. Քաղկեդոնի չորրորդ ժողովում քննարկվող քրիստոսաբանության աստվածաբանությունն իր տրամաբանական մեկնություններով թեև գրեթե նույնն է տիեզերական երեք ժողովների մեկնաբանությունների հետ, այդուհանդերձ, Քաղկեդոնի ժողովը մերժեց բանաձևը և դարձրեց մարմնացյալ բանի մեջ բնությունը երկուսն է, եթե կարելի է այսպես ասել, նկատի ունենալով մարդկային և աստվածային սկիզբը: Ռուսները դավանում են, ինչպես հույն օրթոդոքս եկեղեցին, այդ սկզբունքը: Իսկ ըստ էության երկու եկեղեցիների աստվածաբանությունը պետք է համարել որպես ուղղափառ դավանանք:

- *Իսկ ինչո՞վ բացատրել խաչակնքման կարգի տարբերությունը, մենք՝ վերև-ներքև-ձախ-աջ, ռուսները՝ վերև-ներքև-աջ-ձախ:*

- Այդ առնչությամբ գոյություն ունեցող մեկնաբանությունների մեջ թերևս շատ ավելի հավանական ու բնորոշիչ է հետևյալ տարբերակը. խոսքը վերաբերում է բառակապակցական շարադասության տարբերությանը և որևէ աստվածաբանական այլազանություն չի արտացոլում: Ուշադրություն դարձրեք բառերի հաջորդականությանը. մենք առում ենք՝ Հանուն Հոր (Ճակատը՝ բանականությունը) և Որովոյ (Մարիամ աստվածածնից ծնված՝ մարդեղացած) և Հոգւոյն Սրբոյ (հոգին՝ սիրտը, սուրբը՝ աստծո աջ կողմը, նվիրական տեղը): Իսկ հիմա հետևենք ռուսական շարադասությանը Во имя Отца и Сына и Святого Духа. Այսինքն իմաստային առումով վերջին երկու բառերի տեղերը ռուսերենում փոխված են, ինչն էլ պայմանավորում է խաչակնքման կարգը:

- *Իսկ որտեղի՞ց է գալիս «Армяно-Григорянская церковь» արտահայտությունը, որ մենք երբեք չենք կիրառում: Առաքելահաստատ ուղղափառ եկեղեցի ենք և վերջ:*

- Այդ արտահայտությունն, իրոք, տարածված է միայն Ռուսաստանում, ընդ որում հատուկ նշան, որ ռուս եկեղեցին նա դա չի գործածում որպես պաշտոնական անուն: Ըստ իս, դա տեղ է գտել 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ: Հայության այդ հատվածի համար պետք էր հաստատել կանոնադրություն (положение): Սակայն որպեսզի տարակարծություններ չառաջանան հայ եկեղեցու միաբնակության հարցում, ապա, հաստատելով կանոնադրությունը (1836 թ.), որոշում ընդունվեց գրել Армяно-Григорянская церковь, որով պետք էր տարբերակել դրա ռուսահայատակության հանգամանքը:

*Հարցազրույցը վարեց Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ, Մոսկվա*

Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ

ԾՈՒՂԱԿ

Նորեն հավաքվել էինք մեր ընկերոջ գերեզմանին: Տարին մեկ անգամ հայտնվում ենք նրա շիրիմի մոտ և օղիով թոջում մեր կոկորդները, որ ձայնալարերի միջից դուրս ելնող խոսքերը անբռնազբոս լինեն, մտքերը մեր՝ ավելի անկեղծ... Չորս տարի առաջ նա ինքնասպանություն գործեց, որը անհասկանալի էր մեր բոլորիս համար: Մեզ մեծան ուտող-խմող, կատակաբան, կնանուլ էր... Միայն կնոջ ներկայությունը հերիք էր, որ նա երկար ապրել ուզեց... Եվ՝ ինքնասպանություն... Նրա այդ արարքը շրջապատը վատ ընդունեց: Ոչ մի քահանա չցանկացավ նրա հոգուն հանգստություն տալ... Նրա ինքնասպանությունը առիթ դարձավ, որ մեզանից յուրաքանչյուրը անդրադառնա սեփական կյանքին: Տխուր զբաղմունք է, իհարկե... Ընկղմվել ապրած կյանքի մեջ, ամբողջացնել կյանքի բոլոր դրվագները մի տրցակում ընկճախտ առաջացնելու ամենազգվելի միջոցն է:

- Մարդկության գոյությունը քանի՞ տարի է, - հարցնելու պես ասաց Սիմոնը:
- Ասում են՝ երեսուն միլիոն տարի... - հարցը անպատասխան չթողնելու համար արտաբերեց Կարապետը, որ Կարպ էր ընտրել իր անվան փոխարեն:
- Երեք միլիոն, - ճշտեց Հակոբը:
- Ո՞վ ասաց, - քննադատեց Սիմոնը:
- Հեռուստատեսությամբ են լսել: Երեք միլիոն:
- Հեռուստատեսությունը երբեմն սխալվում է: Տարբեր գրքերից է վերցնում տեղեկությունը... Եվ հաճախ շփոթում է... Անփույթ են... Էդ գրքերը ես էլ եմ կարդացել... Երեսուն միլիոն, - համառեց Սիմոնը:
- Երեք միլիոն, երեսուն միլիոն... Ի՞նչ տարբերություն, - ասացի ես: - Մեր կյանքը որքա՞ն տեղ է գրավում այդ երեսուն թե երեք միլիոնի մեջ...

Մենք, առանց իրար հետ նույնիսկ հայացքով պայմանավորվելու, մայեցինք տապանաքարին:

- Քառասունհինգ տարի... - արտաբերեց Հակոբը:
- Նա կարող էր մի փոքր երկար ապրել... Եթե...
- Ինչքա՞ն երկար... Երեք միլիոն, թե՞ երեսուն միլիոն...

Բոլորս լռեցինք:

- Եթե հավատանք այն բանին, թե կյանքը շարունակվում է մահվանից հետո՝ նրա տևողությունը անվերջանալի է... - ժպտաշուրթ մրթմրթաց Հակոբը:
- Մեծ մխիթարանք՝ երեխայացած մարդկանց համար... - ասաց Սիմոնը: - Գրանդիոզ մխիթարանք, - ավելացրեց նա՝ ավելի համոզել լինելու հավակնությամբ:
- Սաղ լինենք մեր այն քառասուն-հիսուն-յոթանասուն տարիների ընթացքում, եթե Աստված զոնե յոթանասուն տարի տա... - ասաց Հակոբը և օղու բաժակը խփեց բոլորիս բաժակներին:
- Սաղ լինենք, - արտաբերեցինք մեկ-մեկ բոլորս:
- Սաղ լինենք և՛ հաջողության մեջ, և՛ անհաջողության մեջ, և՛ բանտում, և՛ ազատության մեջ... - բաժակը դատարկելուց հետո ասաց Հակոբը:
- Բերանդ լավ բաց... Ինչո՞ւ բանտում...
- Որովհետև ես ձեր ասած այդ երեսուն միլիոն տարիներից ինձ հատկացրած դեռևս քառասուն տարուց յոթը անցկացրել եմ բանտում...

Թեպետ բոլորս գիտեինք Հակոբի բանտարկության փաստը, բայց հիմա ասես առաջին անգամ էինք լսում:

- Տակը ի՞նչ է մնում... - տխուր հաշվարկում արեց Կարպը: - Երեսուն երեք՞:
- Երեսուներեքից երկուսը հիվանդանոցում են անցկացրել՝ համարյա անգիտակից դրության մեջ: Երեսուներեքից հանեց զոնե հինգ մանկական տարիները ևս...

Ոչ ոք չուզեց շարունակել այդ կիսակատակ, կիսատխրահեծ թվաբանությունը: Սակայն յուրաքանչյուրիս մեջ նա գտավ իր տեղը:

Լռեցինք: Հետո Սիմոնը լցրեց բաժակները և դիմեց մեր ընկերոջ շիրմաքարին.

- Աստված հոգիդ լուսավորի... Շատ ես տանջվել... Քեզ անչափ քիչ է տրվել այս անվերջությունից... Հինգ-վեց տարի, երկի...

Սիմոնը հանգուցյալի ամենամոտ բարեկամն էր, և նա մեր բոլորից ավելի հանգամանալից գիտեր նրա կյանքի ելեւեջների

մասին: Նրան ուղղված մեր հայացքները հուշեցին, որ մանրամասնի սպասումի մեջ ենք:

- Դպրոցն ավարտելուց հետո վեց տարի հոգեբուժարանում էր, ապաքինվելով՝ ընդունվեց ինստիտուտ... Ինստիտուտից հետո աշխատում ու աշխատում էր... Համառն էր... Շարժունակ... Շտապում էր ապրել... Ասես գիտեր, որ տարիները փայտեցում են... Տարիների ետևից էր ընկել... Հասնել էր ուզում... Չհասավ... - Երեք միլիոնի մեջ՝ տասը-տասնմեկ տարի... Ինչքա՞ն աղքատ ենք մենք... Մի փոքրիկ, աննշան հատված՝ անեզր ժամանակի մեջ...
- Ետևում՝ անվերջություն, դիմացը՝ անվերջություն... Մի բուռ գոյություն, աննշմարելի մի բիծ հավերժության մեջ...
- Հավերժություն... Ի՞նչ գիտես... Գուցե պարապո՞ւտ... դատարկություն... Բոլորիս բարձրագույն կրթությունը օղու հետ իմաստակելու ընդունակություն է ձեռք բերում:
- Եթե մեր առաջապահն և զվարճասեր տարիները դատարկություն չհամարես, ուրեմն դատարկություն ընդհանրապես գոյություն չունի... Մնացածը ուրիշների տառապանքն ու զվարճանքն է... - ասաց Հակոբը:
- Զվարճա՞նք... - ներգոյս արծազանքեց ինքնեկ: - Ես միայն տառապանք գիտեմ, որ երբեմն-երբեմն այն փոխակերպում են ուրախության...
- Կարող ես փոխակերպե՞լ... - հարցրեց Կարպը:
- Չգիտեմ... Գուցե՝ պարտադրել... Մի խոսքով՝ չգիտեմ:
- Մենք ի՞նչ գիտենք որ... - տապանաքարը շոյելով արտաբերեց Կարպը:

Օղին իր դերը կատարում էր, և քիչ հետո մենք մտանք վերազանցական ոլորտ, ուր երկինք կա, հավերժություն և Աստված: Կարպը ձեռքերը վեր պարզեց ու բացածայնեց.

- Աստվա՛ծ, ինչո՞ւ դու այսքան քիչ ես մեզ տվել... Մի աղտոտ խլյակ՝ անվերջանալիության մեջ...
- Հավատո՞ւմ ես Նրա գոյությանը, - լուրջ հարցրեց Հակոբը:
- Հավատում եմ, - շտապ արտաբերեց Կարպը, ասես եթե ուշացներ խոսքը, կարող էր ուրիշ բան ասել, և ասաց ուրիշ բանը: - Չգիտեմ... Երբ մեղն եմ հավատում եմ, երբ գործերս լավ են՝ մոռանում եմ Նրա մասին:
- Պիտի՛ հավատալ, պիտի՛ հավատալ... - փնթփնթաց Սիմոնը: - Մեզանից խելոք մարդիկ հավատում էին...
- Մեզանից խելոք մարդ որտե՞ղ կա աշխարհում... - օղու գոլորշու հետ կատակ արտաբերեց Մարտինը, որի ներկայությունը ես նոր եմ միայն արձանագրում, որովհետև նա լռության մեջ այնպես է թաղվում, որ առանց սևեռվելու դժվար է նրան նշմարել:
- Ակադեմիկոս Պավլովը... Իվան Պետրովիչ Պավլովը...
- Նա հավատացյալ՝ էր...
- Հըըը՛մ... Են էլ ի՞նչ տեսակ...
- Ես հավատում եմ Պավլովին... Եթե նա իր ամբողջ ինտելեկտով ու գիտելիքներով հավատում էր Աստծուն, ես ո՞վ եմ, ախր...
- Դու հարբած գիտնական ես... Հարբած ես, բայց գիտնական ես... Իրավունք ունես չհավատալու... - ավելի Կարպին գրգռելու համար ասաց Մարտինը:
- Հիմա կապացուցեմ... Հիմա կա-պա-ցու-ցեմ... - ասաց ու պապանձվեց Կարպը՝ կարծես մոռանալով իր խոսքի ոլորտը՝ լռության մեջ չոքելով տապանաքարի առջև: - Դու երկի ինձ լսում ես, Հենրիկ ջան...
- Կարպ, Կաա՛րպ, մենք էլ ենք քեզ լսում... Պավլովի մասին էիր ասում...
- Կարպը ոտքի ելավ և շատ լուրջ, հարբածության հետ կռվելով, պատմեց.
- Մոսկվայում Պավլովյան չորեքշաբթիներ էին անցկացնում Ռուսաստանի հայտնի հոգեբույժները... Մեկ-մեկ գնում էին հոգեկան հիվանդների: Լենինգրադից հրավիրում էին Պավլովին, որպեսզի իրենց վճիռները ավելի ճշգրիտ լինեն... Պավլովը նրանց համար մեծ հեղինակություն էր հոգեբուժության ասպարեզում... Եվ երբ հիվանդին ներկայացնում էին կրոնական ախտանիշով, Պավլովը սաստիկ ջղայնանում էր՝ պնդելով, որ կրո-



նական ախտանիշ գոյություն չունի... Կա հավատ... Կա Աստված:  
 - Իսկ նման ախտանիշ այսօր գոյություն ունի՞ բժշկության մեջ,  
 - հարցրեցի ես առանց հետաքրքրության դրա նկատմամբ: Այր-  
 գապես հարցն ինքն իրեն սողաց ուրիշ մտքերի վրայով: Կարծես  
 մահացած մորս կողմ գնացին, մահացած ընկերներիս կողմ...  
 Մեծ մահի կողմ, որը և՛ իմ առջևում է, և՛ իմ ետևում... Իմ սկզբի  
 մահը... Որքա՞ն է նրա երկարությունը... Իմ կյանքն առկայծեց  
 այդ մահվանից... Ու արագորեն գնում է նորեն դեպի մահ... Իմ  
 երկրորդ մահը... Որքա՞ն պիտի լինի նրա երկարությունը... Պա-  
 տասխանի փոխարեն սիրտս ճնշվում է, և ճնշվոցը պարունակում  
 է այն տարածության խավարը, որը պատասխան չունի... Իսկա-  
 պես, մեր այս խլակը երկու մահերի արանքում սեփեթում է՝

մելամաղձի վրա ժպիտ դնելով, համառորեն անտեսելով, հետա-  
 ձգելով երկրորդ մահը... Իմ խղճուկ, անիմաստ խլակը երկու  
 մահվան արանքում...  
 - Է՛յ, ո՞րը գնացիր... Որտե՞ղ ես... - ուսս ընկավ Սիմոնը:  
 - Չգիտեմ, - ասացի ես, - ոչինչ չգիտեմ...  
 - Ստո՛ւմ ես... Դպրոցում իմ շարադրությունները ո՞վ էր գրում...  
 Չը՞... Կարծում ես մոռացե՞լ եմ... Երախտամո՞ռ եմ... - նրա կատա-  
 կը ասես պիտի լուրջ երանգ ստամար ես փարվեցի նրան:  
 - Օղի լի՛ց, - ասացի:  
 Նորեն հացը թրջեցինք օղու մեջ, բաժակները անծայն զարկե-  
 ցինք իրար, և ընկանք ընդարմության գիրկը: Մենք շոշափելի  
 էինք հիմա, շոշափելի էր գերեզմանոցը երկու հավերժական  
 անելության արանքում:

# Հայկական հարսանիքները գլոբալիզացվում են

## Նորամուծություններ մեր հարսանիքներում

Ժամանակակից հայկական մի հարսա-  
 նեկան արարողության ժամանակ պարզե-  
 ցի, որ այսօր «մոդայիկ» է փեսային արա-  
 բական պորտապար նվիրելը, ինչը հիմ-  
 նականում անում է նրա եղբայրը կամ ըն-  
 կերը: «Ընդհանրապես, ուրախառիթ ծե-  
 սերն ավելի դիմամիկ են և շատ են փոփոխ-  
 վում, քան, օրինակ՝ հուղարկավորման ծե-  
 սը», - մեզ ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ հնագի-  
 տության և ազգագրության ինստիտուտի  
 ավագ գիտաշխատող Արմենուհի Ստե-  
 փանյանը փաստելով, որ հայկական հար-  
 սանիքներում արևելյան մոտիվները  
 միայն որոշ սոցիալական խմբի ճաշակի  
 դրսևորում են: Նա նաև ավելացրեց, որ  
 հին հայկական ավանդույթների համա-  
 ձայն, նվերի այսպիսի մատուցման ձև չի  
 եղել, քանի որ ժողովուրդը նվեր անվան  
 տակ միայն նյութական արժեք է հասկա-  
 ցել: «Առհասարակ փեսայի բարեկամները  
 նրան նվերներ չեն արել: Հայաստանում  
 ընդունված է եղել, որ աղջկա բարեկամնե-  
 րը տղային նվեր տան, տղայի ազգական-  
 ները՝ աղջկան»,- ասաց Ա. Ստեփանյանը:  
 Այս գործում մեծ դեր է կատարել մակար-  
 ների՝ փեսայի ընկերների խումբը, որոն-  
 ցից այսօր «պահպանված» միակ հերոսը  
 մակարապետն է՝ «ազապ բաշին»:



պատրաստ է լինում, մինչդեռ հնում հար-  
 սին հագցնելը բավական խորիմաստ ծես  
 էր: «Հարսին հագցրել են միայն տնից  
 դուրս գալուց առաջ: Այդ արարողությանը  
 մասնակցում էին հարսի ընկերուհիները  
 և քավորկիները: Ներկայիս ծեսում հնից  
 պահպանվել է միայն մի պատահիկ, երբ  
 քավորկիները իր հետ է վերցնում հարսի  
 գլխի հարդարանքը: Հարսի սանրվածքը  
 փոխում էին ամուսնացած կնոջը վայել  
 հարդարանքով: Այսինքն՝ չամուսնացած-  
 ների դաշտից նրան տեղափոխում էին  
 ամուսնացածների դաշտ», - պատմեց Ա.  
 Ստեփանյանը: Այդ ընթացքում ծաղկոցա-  
 վորների խումբը հարսի փոխարեն լացա-  
 կուծած երգեր էր երգում, որով հարսը  
 հրաժեշտ էր տալիս հորական տանը:  
 «Հնդկահայկական աշխարհում և նույնիսկ  
 Եվրոպայում մինչև 17-րդ դար հարսանե-  
 կան հագուստը կարմիր էր, քանի որ այն  
 արյան, կյանքի շարունակականության,  
 երջանկության խորհրդանիշն էր: Ավան-  
 դական ծեսում հայերս չունեինք հատուկ  
 հարսանեկան հագուստ: Ամեն զավառում  
 հագնում էին համապատասխան տա-  
 րագ», - ասաց տիկ. Ստեփանյանը: Առա-  
 ջին անգամ հարսի սպիտակ շոր է հագել  
 Մարի Ստյուարտը: Նա իր ամուսնու թաղ-  
 ման արարողությանը սպիտակ զգեստով  
 էր ներկայացել, ինչն այնքան գեղեցիկ էր,  
 որ երկրորդ անգամ Շոտլանդիայում  
 ամուսնանալիս Մ. Ստյուարտը պատվիրել  
 է նմանատիպ հագուստ: Ներկայիս հար-  
 սանեկան արարողությունների ժամանակ  
 հաճախ հարսի ու փեսայի գլխին վարդի  
 թերթիկներ են լցնում կամ նրանց ճանա-  
 պարիդ պատում թերթիկներով: «Սա նո-  
 րություն է, քանի որ ոչ միայն հայկական,  
 այլև սլավոնական երկրների հարսանե-  
 կան ծեսերում ծաղիկը որևէ դեր չի խաղա-  
 ցել: Ծաղկի տեղերն են զառ տալու գործո-  
 ղությունը մենք ունեցել ենք այլ առարկա-  
 յով: Երբ հարսն ու փեսան դուրս են եկել

եկեղեցուց կամ երբ մտել են տղայի տուն,  
 նրանց գլխին ընդդեմ են լցրել, ինչը  
 բեղմնավորման խորհրդանիշ էր», - ինչեց  
 Ա. Ստեփանյանը:

Ներկայիս տարասիկներ բաժանելու  
 ավանդույթը ևս իր ավանդական արմատ-  
 ներն ունի: «Նախկինում բոլոր հարսա-  
 նիքների ժամանակ եղել է ընտանեկան  
 կամ հարսանեկան ծառ, որի վրա կար-  
 միր, կանաչ ժապավեններ են փաթաթել,  
 իսկ զագաթին նուռ դրել: Այս կենաց ծառը  
 ողջ հարսանիքի ընթացքում մակարապե-  
 տի մոտ է եղել, իսկ խնջույքի ավարտից  
 հետո այն մասնատվել է բաժանվել է հյու-  
 րերին, ինչով նորապսակները կիսել են  
 իրենց ընտանեկան երջանկությունը», -  
 ասաց Ա. Ստեփանյանը:

Պարզվում է՝ հարսի ծաղիկ շարտելն էլ  
 կապ չունի մեր ավանդական ծեսերի հետ:  
 Դա, ըստ ազգագրագետի, լատինական ֆիլ-  
 մերից է ներմուծվել: Սակայն մենք ունենք  
 ազգային խորհրդանիշներ, որոնք մոռացել  
 են, օրինակ՝ ուսկապը, խաչկապը, կոսպան-  
 դը, որը կարմիր և կանաչ ժապավեններով  
 խաչաձև կապում էին փեսայի կրծքին: Այդ-  
 պիսի մի սիմվոլ էր նաև նարոտը, որը բրդե  
 կարմիր կամ կանաչ միահյուսված թելերից  
 էր կազմված: Ամուսնության խորհուրդը կա-  
 տարելիս քահանան դա փաթաթում էր փե-  
 սայի և հարսի վզին կամ դաստակներին և  
 կնքում մոմով: Նարոտը խնջույքի վերջում  
 արծակվում էր, որով նորապսակներին հար-  
 սանեկան առագաստ մտնելու թույլտվու-  
 չյուն էր տրվում:

Տաթև ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՆԵՐՈՒՄ ԿՇՆՈՐՀՎԻ՞

«Նոյյան տապան» գործակալությունը հղում  
 անելով «Հուրիթ» օրաթերթի վաշինգտոնյան  
 թղթակից Քառը Ջինդեմիրին, հաղորդել է, որ  
 օրեր առաջ Թուրքիայի շահերի պաշտպան Դեյ-  
 վիդ Սալցմանը հայտարարել է, որ հայ վրիժառու  
 Համբիկ Սասունյանը դիմել է Կալիֆոռնիայի դա-  
 տական խորհրդին՝ ներման դիմումով: Հիշեց-  
 նենք, որ Սասունյանը 1982-ին մահափորձ էր  
 կատարել Լոս Անջելեսում Թուրքիայի հյուպա-  
 տոս Քեմալ Արքբանի դեմ: Վերջինս մահացել  
 էր, իսկ Համբիկը դատապարտվել ցմահ ազա-  
 տագրվման: Ըստ թուրք պաշտպանի, ինքը հե-  
 տամուտ է լինելու, որ Լիբանանի քաղաքացի  
 Սասունյանն ազատ արձակվելու դեպքում հանձ-  
 նվի թուրքական իշխանություններին: Սասուն-  
 յանի փաստաբանն է հայտնի իրավաբան Մարկ  
 Կիրակոսը:

# ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ

Շրջանային թատրոնի վարագույրի արանքից դերասան Բարինյանը աչք ածեց դահլիճին:

- Հանդիսատես չկա... Դահլիճը դատարկ է... - ընկճված արտաբերեց դերասանը:

- Կզան... Մի՛ նտածիր... Սիրտդ քո՞ք պահիր, - ասաց թատրոնի տնօրենը: - Բոլոր տոմսերը վաճառված են...

- Հաա... - արտասանեց Բարինյանը՝ ավելի ծայրալարերը ստուգելու համար: «Հաա»-ն երկարեց, վերածվեց մեղեդիի՝ մինչև կհասներ զուգարան:

Ձանգը հնչեց, և ներկայացումը վարող ռեժիսորը կանչեց Բարինյանին.

- Բարինյան... Վարագույրը բացվել է... Բե՛մ... Բե՛մ... Բե՛մ...

Բարինյանը վաղվադակի մտավ բեմ և քարացավ. դահլիճը դատարկ էր, ամայության տհաճ հոտը փչեց բեմ: Նա մեքենաբար շեքսպիրյան մի երկու նախադասություն արտասանեց և պապանձվեց: Լռությունը երկար կարող էր տևել, եթե փոքրիկ թատրոնի վերջին կարգերից չլսվեր.

- Շարունակիր... Ես էստեղ եմ...

Բարինյանը հանկարծակիի եկավ, սակայն տարիների բեմական վարժանքը իր գործն արեց՝ ստիպեց նրան շարունակել արտասանությունը: Դահլիճի մթության մեջ աչքի պոչով գտնել էր ուզում ծայրի տիրոջը: Ոչինչ չէր երևում... Բարինյանը այլևս դեմքով դեպի դահլիճն էր ուղղված և շարունակում էր իր տեքստը՝ հայացքով որոնելով հանդիսատեսին՝ ինչպես կորած առարկա են որոնում սենյակի թունդուպոնայիններում: Ներքինը փրթոփրթում էր, ուզում էր հիասթափության ճիչ արձակել, նայեց կուլիսների կողմը՝ պատասխանի, բացատրության ակնկալիքով... «Սա ի՞նչ է... Կատա՞կ է... Փորձի մի ծև՞ է... Ինչո՞ւ չեք զգուշացրել... Եվ շարունակելով շեքսպիրյան տեքստը, որն ասես կպել էր շուրթերին, շեշտակի պատվեց ու շարժվեց բեմից դուրս...

- Սպասիր... Ո՛ր ես գնում... Դերո՞չի վերջացել... Լավ էլ սկսեցիր...

- լավեց դահլիճի մթի միջից՝ ծափահարության ուղեկցությամբ:

Բարինյանը կանգ առավ, հետո մոտեցավ բեմառաջին և ակնապիշ նայեց դահլիճի խորքը:

«Ես այստեղ եմ», ասելով՝ դահլիճի վերջին կարգերի մթությունից հայտնվեց ու դեպի բեմը շարժվեց խոշորանդամ մի անձնավորություն, որի անունը ես՝ հեղինակը, կարող էի ասել, բայց ինձ կանխեց հենց ինքը.

- Մուխոյանն եմ... Չե՛ս հիշում...

Տարօրինակ էր, անսովոր... Մի՞թե նման բան կարող էր երբևիցե տեղի ունենալ որևէ թատրոնում:

Մուխոյանը ընդհուպ մոտեցավ բեմին, նստեց առաջին կարգում և խորհրդավոր, սակայն բարյացակամ մի ժպիտ ուղղեց դեպի Բարինյանը:

- Ես եմ՝ Մուխոյան Նանսենը... Հիշո՞ւմ ես...

Բարինյանը ինքնեկ գլխով արեց անջատ միտքը վերացարկության մեջ:

- Իզուր ես հիասթափվում... Դահլիճը լի՞քն է...

Բարինյանը, մեքենաբար, հայացքով ընդգրկեց դահլիճի դատարկությունը. «Ի՞նչ միստիկա է... Ի՞նչ է կատարվում և ի՞նչ է կատարվելու...»

- Ես եմ այսօր քո հանդիսատեսը... Գնել եմ բոլոր տոմսերը... Եղածը մի բան չէր... Այնպես որ՝ լիքն է քո դահլիճը...

Բարինյանի մեջ, այնուամենայնիվ, արժանապատվությունը միակցվեց ողնաշարին և ուղղահայաց կեցվածքով հեռացավ հասավ մինչև բեմեզրը: Նրան կանգնեցրեց Մուխոյանի ծայրը.

- Չեղա՞վ... Իրավունք չունես... Դերասանական թիկան խախտում ես... Չեղա՞վ, Բարինյան, չեղա՞վ...

Մուխոյանի խոսելածը սորոտում էր Բարինյանի մարմնի ամբողջ երեսակով և դողերոց առաջացնում:

- Տեսնո՞ւմ ես՝ ես լիքը դահլիճ հանդիսատես եմ, դու մենակ մարդ ես... - քրքջաց Մուխոյանը:

- Ի՞նչ ես ուզում, - վերջապես հարցրեց Բարինյանը: - Ես մի հոգու համար Շեքսպիր չեմ խաղա...

- Դու մի հոգու համար Շեքսպիր չէ, Քրիստոս էլ կխաղաս...

Բարինյանը մտաբերեց Մուխոյան Նանսենին: Բայց հիմա ի՞նչն է բերել նրան թատրոն, այն էլ այսպիսի տարօրինակ առաքելությամբ: Նա հո երբեք սեր չի ունեցել արվեստի նկատմամբ... Որքան հիշում է՝ անփույթ էր ամեն ինչի վերաբերյալ...

- Հիմա ի՞նչ ես ուզում... Ինչո՞ւ ես կազմակերպել այս թամաշան... Եվ ո՞նց ես հիշել ինձ... Էլ բան ու գործ չունեի՞ր... - միանգամից հոգնություն զգալով՝ արտաբերեց Բարինյանը:

- Խոսել եմ ուզում քեզ հետ... - ասաց Մուխոյանը: - Արի խոսենք, հա՞...

- Խոսե՛մք... Խոսելու ուրիշ տեղ չգտա՞ր...

- Չէ՛է՛... Ես տեղը մեր ռինգն է... Ես տեղը մեր առաջվա գրույցի շարունակությունն է...

- Մենք ի՞նչ ընդհանուր բան ունենք...

- Ընդհանո՞ւր... Հենց հարցն էլ այն է, որ ընդհանուր որևէ բան չունենք և չենք կարող ունենալ...

- Բա էլ ի՞նչ...

Մուխոյանը չորս կողմը դիտեց, ասես գնահատում էր թատրոնը, հետո մի նոր հայացքով ընդգրկեց Բարինյանին ու հարցրեց.

- Դու էլի՞ ես կարծում, որ աշխարհում գաղափարից, անունից, խղճից վեր ոչինչ չկա:

Բարինյանը հոգոց հանեց.

- Եղպիսի դատարկ խոսակցության համար թատրոնն ես ընտրել... Չե՛ս խնայել միջոցների՝ բոլոր տոմսերը գնելով: Արի հետաձգե՛մք պարապ խոսակցությունը մի ուրիշ անգամվա և վայրի համար...

- Պարա՞պ՝ ասացիր... Չէ՛... Եվ տեղն է իսկական, և՛ խոսակցությունն է կարևոր...

- Արի, գոնե գրիմս հանեմ...

- Չէ՛... Ես վճարել եմ գրիմիդ համար էլ... Ես թատրոն եմ եկել քեզ տեսնելու, քեզ հետ շարունակելու մեր հին խոսակցությունը...

Մուխոյանի պահվածքը այլևս վիրավորական էր, և դերասանը սրտմտեց.

- Մի ուրիշ անգամ... - արհամարհանքով արտաբերեց Բարինյանը: - Ես զնացի...

- Գնացի՞ր... Ո՛ր է քո տնօրենը... Նա քեզ պիտի ասի, որ ես վճարել եմ, հասկանո՞ւմ ես, վճարե՛լ եմ... - կոշտաձայն արտաբերեց Մուխոյանը:

- Շառ հո չե՛ս, եղբայր... - տեղի տվեցին դերասանի նյարդերը: - Հանգստացիր... Եվ պարզե՛մք հասարակ մի բան...

- Ի՞նչ ունենք պարզելու ես ու դու... Մենք հարյուր տարի իրար չենք տեսել...

- Շատ բան, սիրելիս... Հիշո՞ւմ ես՝ դու ինձ համարում էիր անբանի մեկը, գաղափարագուրկ, ավելորդ մարդ...

- Չե՛մ հիշում...

- Դու երգում էիր՝ հանրագիտարանում գոնե երկու տող լինեք քո մասին... Ասում էիր՝ անունն է կարևորը և մնայունը դարերի մեջ... Մնացածը քաղցրեմիների թոհուրոհն է... Որ կյանքը երկրորդական է... Հոգու գոյությունն է կարևորը... Խղճի ազատությունը, ճշմարտությունը, դեմոկրատիան...

- Այո... Հիմա էլ կարող եմ կրկնել...

- Կրկնի՛ր, կրկնի՛ր... - հեզմեց Մուխոյանը: - Դու լավ պաշտոն էիր զբաղեցնում՝ ժողատեղծագործության տան տնօրենն էիր, պիեսներ էիր հաստատում, իհարկե ոչ առանց նյութական օգուտի, և դեմ էիր համակարգին... Ազատություն, դեմոկրատիա՛ էիր կոչում... Իսկ ես հետամնաց էի և գաղափարագուրկ... Դու մի բան չգիտեիր...

- Ի՞նչ բան...

- Այն, որ Աստված ոչ թե բարություն ու սեր է քարոզել, այլ գոյության հիմքը՝ կենսաբանական ճշգրտություն... Բնությանը հարազատ լինելու հատկություն... Հասկանո՞ւմ ես, դերասան... Ես բնության մարդն եմ, դու ուղեղի խաղն ես...

- Հետո՞... - մռայլվեց Բարինյանը:

- Հետո այն, որ փվեց գողերի համակարգը, ինչպես դու էիր ասում, և տեղծվեց դեմոկրատիա... Եվ դու այժմ դերասան ես, ես՝ քո գնորդը. քեզ խաղացնողը... Կորցրեցիր չսիրածդ համակարգի առավելություններդ... Դեմոկրատիա՛...

- Դե, չափը մի՛ կորցնի...

- Գողությունը, վերցնելը բնության օրենքն է, դու, դու՛ք այդ օրենքի դեմ եք... Ես «գողանում» էի սովետների բռնության ժամանակ, և հիմա էլ եմ «գողանում» դեմոկրատիայի պայմաններ...

15

րում...  
 - Վերջացրի՞ր... Թո՛ղ ինձ հանգիստ: - Երբեք այսքան հոգնած չէր զգացել իրեն Բարինյանը:  
 - Ես քեզ հաղթել եմ իմ ճշմարտությամբ... Կենսաբանական ճշգրտությամբ...  
 - Լա՛վ, լա՛վ... հաղթել ես... Միայն թե ինձ հանգիստ թող...  
 - Դու սեր էիր բացատրում մեր ընդհանուր համակրանք աղջկան... Հիշո՞ւմ ես... Ինձ չէր կարելի սիրել, քեզ սիրում էին, որովհետև դու քաղաքակրթության խաբկանքն էիր ներկայացնում, ես գետնակոր էի...  
 - Պրծա՞ր...  
 - Հիմա կպրծնեմ...- ասաց Մուխոյանը և շրջվեց դեպի դահլիճի վերջին կարգերը.  
 - Մեղեա՞... - կանչեց Մուխոյանը, և Մեղեան՝ ամբողջը ոսկու մեջ, օրորվելով եկավորեց դեպի բեմը:

- Բարև, Բարինյան... - սեթևեթանքով արտաբերեց Մեղեան: - Վաղուց մենք չենք հանդիպել...  
 - Մեղեա՞... - զարմացավ Բարինյանը: - Դո՞ւ... սրա՞ հետ...  
 - Ամուսի՛նս է, - արժանապատվորեն, նույնիսկ պարծենալով արտաբերեց Մեղեան:  
 - Այո՞... Կինս է... Իմ թանկագին կինը...  
 - Այո՞... - ասաց Մեղեան: - Իմ թանկագին ամուսինը, - և փարվեց Մուխոյանին ու դիմեց Բարինյանին.  
 - Մենք երկուսով կդիտենք քո խաղը... Հերիք չե՞նք... Ամբողջ մի դահլիճ հանդիսատես...  
 Բարինյանը որքան էլ փորձում էր վայելույշ պահել սեփական անձը, այնուամենայնիվ աչքերը տամկացան: Շեքսպիրի ամենածանր ողբերգություններում դժվարությամբ էր արցունքներ առաջացնում, ջուր էր քսում կոպերին... Հիմա աչքի անկյունում թաքնված արցունքի միակ կաթիլը իսկական էր:

Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ 2007 թ. հունվար

# ՀՈԳԻՆ ՓԱՅՏԻ ՄԵՉ



Են մեր օրերը: Թանգարանի ամենատարեց ցուցանմուշը մ. թ. ա. 3-րդ հազարամյակի հնագիտական կճուճներն են: Հարուստ է ազգագրական իրերի հավաքածուն: 19-րդ դարի հայկական կենցաղին բնորոշ բազմաթիվ առարկաները՝ խնորի տաշտերն ու խնորի զնդերի խոնջաները, կարասները, աղամանները, գդալամաններն ու շերտները, պղնձե կաթսաները այցելուի աչքերի առաջ վերականգնում են հայկական ավանդական օջախի առօրյան: Հապա գաթանախշիչներ՝ ռո, որոնցից ամեն մեկը մի գերդաստանի, տոհմի կնիքն է եղել: «Փայտարվեստի թանգարանի հիմնական խնդիրներից է ոչ միայն փայտարվեստի նմուշները պահպանելը և ցուցադրելը, այլև շարունակել դրանց հավաքագրումը, - ասում է գլխավոր ֆոնդապահ Մելանյա Միրզոյանը: - Վերջին երեք տարիներին թանգարանի տնօրեն Հենրիկ Սուխայանի նախաձեռնությամբ Հայաստանի հեռավոր մարզերում կազմակերպվում են շրջիկ ցուցահանդեսներ, որոնք ուղեկցվում են ժողովրդական արհեստներին վերաբերող դասախոսություններով, լուսապատկերների (սլայդների) և տեսաֆիլմերի դիտումով: Մարզերից հավաքվում է նաև դաշտային նյութ՝ բանավոր խոսք: Փայտարվեստի հնագույն նմուշների զգալի մասը վերականգնել ենք ոչ միայն գրականությամբ, այլև պատկառելի տարիքի հասած վարպետների շնորհիվ: Շրջիկ ցուցահանդեսներից վերադառնում ենք հարստացած»:



Այս օրերին թանգարանի այցելուները փայտարվեստի գաղտնիքները կարող են բացահայտել հացի մշակությամբ: Այն, որ Հայկական լեռնաշխարհը ցորենի և այլ հացահատիկների մշակությամբ մեծ էր զբաղված, ամենահին և ամենաառաջինը: Գործող ցուցահանդեսը նվիրված է հայկական փայտարվեստի այն հարուստ շերտին, որն առնչվում է հացի մշակույթին: Ցուցադրվող առարկաները, որոնք ընդամենը մի քանի տասնամյակ առաջ յուրաքանչյուր հայ օջախի անբաժան մասն էին, իրենց մեջ կրում են հազարամյակների ավանդույթը:  
 Թանգարանում տարվա ընթացքում կազմակերպված ցուցահանդեսների թիվը հասնում է մեկուկես-երկու տասնյակի: Ներկայացվում են թե երիտասարդ, թե տարեց վարպետների հիասքանչ աշխատանքները: Թանգարանը նաև յուրօրինակ դպրոց է, որտեղ մասնագիտական կրթություն են ստացել ցուցադրվող երիտասարդ հեղինակներից շատերը: Նրանց աշխատանքներից ծնոք են բերել ինչպես Հայաստանի, այնպես էլ Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի որոշ թանգարաններ:

Հիրավի, փայտարվեստի թանգարանը ժամանակներն ու սերունդներն իրար կապող օղակ է, մի վայր, ուր հավերժանում է ավանդական օջախի բույրը:  
*Սանն ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Դարերի պատմություն ունի փայտարվեստը: Անհիշելի ժամանակներից հայ մարդը մշակել է փայտը, պատրաստել դուռ ու պատուհան, կահույք, նաև գդալ ու գաթանախշիչներ, զարդատուփ ու աղաման: Մեզ հասած փայտե իրերի պահպանության, ինչպես նաև փայտի մշակման ու փորագրման ավանդույթների վերածննանը մեծապես նպաստել է 1977թ. հիմնադրված Երևանի փայտարվեստի թանգարանը: ԽՍՀՄ գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ, նկարիչ Գրիգոր Խանջյանի էսքիզներով ձևավորված թանգարանի ցուցանմուշները՝ փայտից, կավից ու մետաղից, այցելուին աննկատ, դարերի միջով բերում-հասցնում

## Armenian town՝ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

Սանտա Կլարայում (Կալիֆոռնիայում) մտադիր են նոր Հայկական քաղաք (Armenian town) կառուցել: 10 ակր տարածքի վրա արդեն կառուցվում է ապագա քաղաքի առաջին շենքը: Քաղաքում կբացվի Ֆրեզնոյի բողոքարկման մարզային դատարանի նոր գրասենյակը, գործարար և մշակութային կենտրոններ:

Քաղաքը կկառուցվի այն տարածքում, որտեղ բնակվել են առաջին հայ գաղթականները: Կպահպանվեն մի քանի հին շենքեր էլ: Հայկական եկեղեցու շուրջ կառուցված քաղաքը կամուրջ կհանդիսանա անցյալի և ապագայի միջև, և կարող է դառնալ առևտրային և մշակութային կենտրոն, - ABC հեռուստաալիքին հայտնել է ծրագրի կազմակերպիչներից մեկը:



# ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՌՌԻՄԻՆԻԱՅԻ ՖԻԼԱՏԵԼԻԱՅՈՒՄ



Ռուսիայի նամականիշերի հարուստ և բազմազան աշխարհում քիչ չեն նաև հայկական մոտիվներով նամականիշերը: Հայերը մեծ ավանդ ունեն Ռուսիայի գիտության, արվեստի և տնտեսության զարգացման գործում: Վանա լճի ափամերձ Արճեշ քաղաքից գաղթած հայերը 13-րդ

դարում Ռուսիայում հարավային Կարպատների հարավային լեռնաշյուղում, գետի ափին հիմնում են մի քաղաք և իրենց հայրենի քաղաքի անունը տալիս թե այդ բնակավայրին, թե մոտակա գետին: Կառուցում են նաև եկեղեցի, որը պատկերված է 1937, 1947 և 1970թթ. թողարկված ռուսական նամականիշերին: Ծագումով հայ ռուսիացի բանաստեղծ Միխայիլ Էմինսկուին նվիրված մի քանի նամականիշ է թողարկվել 1939, 1950 և 1964թթ.:

Մի Գ-15 կործանիչ ինքնաթիռին (կոնստրուկտոր Ա. Միկոյան) է նվիրված 1960թ. թողարկված նամականիշը, իսկ 1969թ. Բուխարեստում թողարկված գեղեցիկ նամականիշին պատկերված է Մանուկ-բեյ Միրզոյանի՝ Բուխարեստում կառուցած իջևանատունը: Ձեռներեց Մանուկ-բեյ (Եմանուիլ) Միրզոյանը Բուխարեստի առևտրի կենտրոնում կառուցել է այն ժամանակների համար բավական մեծ իջևանատուն, որտեղ հանգրվանել են Բուխարեստ ժամանած առևտրականները: Մանուկ-բեյ Միրզոյանը հիրավի նշանավոր դեմք է Ռուսիայի պատմության մեջ: Նրա գործունեությունն առանձնապես վառ է դրսևորվել 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Նա արժանացել է մի շարք պետական պարգևների, նրան շնորհվել են ազնվականական

տիտղոսներ: Իր կապերի ու ազդեցության շնորհիվ Մանուկ-բեյ Միրզոյանը բանակցությունների ժամանակ ստանձնել է միջնորդի դեր: Հենց Բուխարեստի նրա առանձնատանն է ստորագրվել 1812թ. ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը:

Հայ հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու «Ծովանկար» կտավը պատկերված է 1971թ. թողարկված նամականիշին: Ականավոր հայագրի գործիչներին՝ մաթեմատիկոս Սպիր Հարիտին, նեյրովիրաբույժ Դմիտրու Բաղդասարին, բժիշկ-գերոնտոլոգ Աննա Ասլանին, կոմպոզիտոր Թեոդոր Ժորային, նկարիչ Թեոդոր Ամանին են նվիրված Ռուսիայում տարբեր տարիների թողարկված բազմաթիվ նամականիշեր:

Ռուսիայում բազմաթիվ նամականիշեր է ստեղծել հայագրի նկարչուհի Արդա Թաշյանը: (Ռուսիայի բազմաթիվ նամականիշերին նշված է նրա անուն-ազգանունը): Վերջին տարիներին ռուսին ֆիլատելիստները հայկական թեմատիկային անդրադարձել են քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակվելու 1700-ամյակի առթիվ: Ռուսիայում թողարկվել են այդ տարելիցին նվիրված մի շարք ծրարներ:

Վարուժան ԱՆՏՈՆՅԱՆ

# ՀԱՅ ԴՈՒԴՈՒԿԱՀԱՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ



Եթե ասեմ, որ Ռուսաստանի մայրաքաղաքը հայկականացում է, իսկայական չափազանցություն կլինի: Բայց որ օրեցօր գերարդիական տեսք ընդունող մոսկովյան համայնապատկերում երևում են ազգային նոր մոտիվներ, փաստ է:

Հայ եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանի ջանքերով Մոսկվայում գործում է Հայեցի դաստիարակության կենտրոն: Չորսհարկանի գեղատես շենքի բակը, սակայն, աչքի էր ընկնում սոսկ լերկ ասֆալտով: Ահա և անխոնջ սրբազանը որոշեց լրացնել այդ բացը: Եվ այդ գաղափարի իրականացման գործում նրան օգնության ձեռք մեկնեց մոսկովյան հանրահայտ «Տրոյկա դիալոգ» ինվեստիցիոն ընկերության պատասխանատու աշխատող, «Երևան» ամսագրի հովանավոր, բարերար Գոռ Նահապետյանը, որն առաջարկեց այնտեղ կանգնեցնել... հայ դուրուկահարի արձան: Ինքնատիպ գաղափարը մարմնավորեց մոսկվացի ճանաչված բանդակագործ Ֆրիդրիխ Սողոյանը:

Ահա և անցած շաբաթ օրը Մոսկվայի հայ հասարակայնությունը վայելեց արձանի բացման արարողության ջերմությունը: Սրբա-

զանը Ջիվան Գասպարյանի հոգեպարար մեղեդու ուղեկցությամբ ասված իր խոսքում հատուկ նշեց, որ հատկապես վերջին ժամանակներս դուրուկը դարձել է մեր ազգային մշակույթի երևացող բարձունքներից մեկը և, լայն ճանաչում գտնելով նաև Ռուսաստանում, վերածվել մեր ժողովրդի ստեղծագործ տաղանդի խորհրդանիշի: Եվ հայեցի դաստիարակության կենտրոնում սովորող հայ մանուկները, ամեն անգամ անցնելով սքանչելի արձանի կողքով, կհիշեն իրենց արմատները:

Պատասառը գետնին սփռվելուց հետո ներկաներին բարի ժպիտով դիմավորեց խորապես հայադեմք, հայկական տարազով դուրուկահարը՝ բոլորված երազկոտ, ներշնչված, խանդավառ մանուկներով: Քանդակագործական կոմպոզիցիան իրոք այնքան ազգայնաբույր է, որ ասես բացումը տեղի էր ունենում ոչ թե դեկտեմբերյան մռայլից հոգնած մեզապոլիսում, այլ արևաշող հայրենի Հայաստանում:

Բացման արարողության ժամանակ իշխում էր անկեղծության և հոգեհարազատության ոգին: Սակայն գոհունակության ընդհանուր մթնոլորտը իր գազաթնակետին հասավ, երբ սրբազանը շնորհակալություն հայտնեց արձանի կանգնեցմանը ֆինանսապես աջակցած հայորդիներին: Նրանցից մեկը, հանեստորեն չգերազանահատելով իրենց դերը օտար հողում հայ կյանքի գարթոնքին նպաստելու գործում, անվերապահ հայտարարեց (նաև ինքնահավատ բարձրացնելով աջ ձեռքը), որ հաջորդ հուշարձանը նվիրվելու է... լավաշին: Գաղտնիք չէ, որ դուրուկի չափ լավաշն էլ է հանրահայտ բովանդակ Ռուսիայում:

Եվ վերջում փոքր-ինչ չոր վիճակագրություն: Միջոցառմանը ներկա էին ՌԴ Պետդումայի փոխնախագահ Արթուր Չիլինգարովը, նշանավոր ֆուտբոլային մարզիչ Նիկիտա Սիմոնյանը, Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Գեորգի Տեր-Դազարյանը, Մոսկվայի առաջին փոխքաղաքապետի առաջին տեղակալ Սերգեյ Համբարձումյանը, երևելի այլ հայեր:

Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Մոսկվա

Դարուփոս

# «ՏԻՏԱՆԻԿՆ» ՍԿՍՈՒՄ Է ԼՈՂԱԼ ԴԵՊԻ...

(Ամանորյա կատակերգ)



Սիրելի բարեկամներ, մենք գտնվում ենք Դարուփոսի «Զվարթնոց» լաստակայանում: Քիչ անց այստեղից շուրջերկրյա ճանապարհորդության կմեկնի «Տիտանիկ» լաստանավը, որը լավագույնն է ոչ միայն հարավ-կովկասյան տարածաշրջանում, այլև ողջ աշխարհում: 29 հազար խորանարդ մետր ջրատարողությամբ այս հրաշքը կարող է տեղափոխել երեք միլիոն ուղևոր և 20 հազար շիշ «Լուսաստղիկ» օղի և 400 հազար շիշ «Բաջանաղ» գինի: Լաստանավի սենյակները կահավորված են եվրոպական չափանիշներին համապատասխան: Այստեղ գործում է 42261 խաղատուն, 38623 գիշերային ակումբ, որտեղ ելույթ են ունենում Զիմբաբվեի, Զաիրի

և Զանգիբասարի լավագույն նեգր պարուհիներ: Լաստանավի կենտրոնական մասում գործում են արտարժույթի փոխանակման 61777 կետեր, ուղերթային (մարշրուտային) 411 գծեր: Դարուփոսի քաղաքապետը լաստանավի կառուցման ժամանակ շատ էր ցանկանում նաև տրանվայներ աշխատեցնել, բայց նավապետը չհամաձայնեց և քաղաքապետին ուղարկեց ուր-որ պետք է, այսինքն քաղաքապետարանի մասանդրա: Իսկ երբ քաղաքապետը փորձ արեց կրկին խնդրել տրանվայի համար, նավապետը ավելի խիստ զայրացավ և ասաց, որ անհնազանդության դեպքում նրան հոգնայի կենթարկի (այսինքն կլիզմա կանի)...

«Զվարթնոցի» բոլոր հեռուստացույցները շարունակում էին գովազդել «Մեղվաբույն» տոնավաճառում զբաղված կուսակցություններին, ամենահարմարավետ միջադիրները, գիշերային ակումբները, խաղատները, լուտոները և բինգոները: Սակայն հանկարծ այս գովազդներն ընդհատվեցին և էկրանին երևաց Յերիք Արտակյանը: Մարդիկ մտածեցին, թե «Դալլաս» սերիալն է ընդհատվում:

- Սիրելի բարեկամներ, - սարսռազդու ծայրով հայտարարեց Յերիքը, - ստացվել է երկու պաշտոնական հաղորդագրություն: Առաջինը. այսօր հայտարարությամբ հանդես է եկել հնուտ քողագերծող Զակոբ Տիգրանյանը, որը հաղորդել է, թե Սեֆիլ ժիրայունին «Կարապի լիճ» ռեստորանում, կնոջ հետ ընթերցելիս որոշել էր պետական հեղաշրջում իրականացնել Դարուփոսում: Պատկան մարմիններն անմիջապես վնասագերծել են Բեն Լադենի այդ համարգին: Զակոբ Տիգրանյանը հայտարարել է նաև, որ այսպիսի իրավիճակ էր ստեղծվել 10 տարի առաջ, երբ կուսակցական շղարշի տակ գործող ահաբեկչական խումբը, ԴժՌ-ի ներկա փոխնախագահ Դովիկ Վահանյանի ղեկավարությամբ, նույնպես փորձում էր հեղաշրջում իրականացնել...

Նավապետը ուշադիր լսելով այս հաղորդագրությունը, բարձրաձայն մտածեց.

- Այս բարալիկ տղան իրեն լրիվ կորցրել է: Անպայման ցանկանում է մեր ուշադրությանն արժանանալ: Դե, ինչ, դրան էլ բարձրացրեք «Տիտանիկ»:

Հաջորդ կարևոր հաղորդագրությունը «Շաբաթ» ակումբից էր, որտեղ նորերս օծված կաճառական Անան Գառնիկյանը մի սենսացիոն հայտարարություն արեց: Նա ասաց, որ Դարուփոսի լրատվական դաշտը վերջին 15 տարում անբարո է դարձել: Ինչպես նշեց ռեպորտաժի հեղինակ Արշակ Միերյանը, Գառնիկյանի մոտ նկատվում են ծանր հիվանդության հետևանքներ, որովհետև վերջին 15 տարում հենց ինքը Գառնիկյանն է զբաղվել ժուռնալիստների մշակմամբ:

Նավապետը չգիտեր ինչ անել: Գառնիկյանին Դարուփոսում թողնելը վտանգավոր էր ոչ միայն Դակաճառի և Դարուփոսի, այլև ողջ տարածաշրջանի համար, որովհետև նա անվերջ խոսում է 37 թվի մասին: «Տիտանիկի» տախտակամած բարձրացնելը նույնպես հղի կլիներ անկանխատեսելի հետևանքներ



րով: Նավապետի ազնիվ բարեկամ Ծառուկ Գագիկյանը խորհուրդ տվեց Գառնիկյանին զրկել մտավոր որևէ գործունեությունից, նրան ոսկե մրիչ տալ, որպեսզի այլևս գրախոսությամբ զբաղվի և պահվի փակ տարածքում: Իսկ եթե խելոք չմնա՝ կոխել առյուծի վանդակ:

Նավապետը փորձեց սպորտային որևէ ռեպորտաժ գիտել: Նա կառավարման վահանակի օգնությամբ «անցավ բոլոր ալիքների վրայով» և կանգ առավ «Դարուփոս» հեռուստաալիքի վրա, որով ֆուտբոլային մեկնաբան Բաղդասար Սուրենյանի ականջահաճո ծայնն էր լսվում.

- Սիրելի բարեկամներ, - ասում էր այդ ծայնը, - այժմ ընթանում է երկրորդ խաղակեսի 21-րդ րոպեն: Մենք առաջին խաղակեսում և երկրորդ խաղակեսի առաջին 20 րոպենում մանրամասն ծանոթացրինք, թե ինչպիսի հրաշալի թիմ է Աշտարակի «Միկան», ինչքան բարի գործեր է անում օղի ներմուծող «Սարգիս Կարոլինա» ընկերությունը, ինչ են խոսում այստեղ-այնտեղ: Այժմ ժամանակն է, որ ծանոթացնենք մրցող թիմերի կազմին: Ձեզ հայտնում, որ խաղում են Իսպանիայի գրանդ ակումբները՝ «Բարսելոնան» ու «Ռեալը»: Հաշիվը քիչ հետո կպարզենք: Առայժմ ասեն, որ «Վիվարո» և «Տոտո» բուքմեյքերական գրասենյակներում վաճառվում են հրաշք տոմսեր...

- Անջատեք այդ տղային, - գոռաց նավապետը, - և բարձրացրեք «Տիտանիկ»:

Հեռուստատեսության էկրանին երևաց Զրանուշ Զակոբյանը՝ այդ չքմաղ տիկինը, ոչ լայթսը: Նա ի լուր ամբողջ Դարուփոսի հայտարարեց, որ լեզուն, գրագետ լեզուն իր համար առաջնահերթ նշանակություն ունի: Կառավարման վահանակը փոխվեց ԴԼՍ հեռուստաալիքի վրա: Մեծ շուքով նշվում էր Կարապետ Տիգրանիչի հերթական նվաճումը: Ինչպես պարզվեց, անչափ հետաքրքրական հաղորդումների համար նրան շնորհվել է Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության թագուհու թագը:

Նա այլևս ոչ մի հեռուստահաղորդում դիտելու տրամադրություն չուներ, անգամ ԴԼՍ, թեև վերջինս երկու օր առաջ երեք «Օսկար» էր շահել Անգլիայում և վերջին օրերին անընդհատ «Կարաբաղի իրողվելն» էր երգել տալիս դեռահաս աստղիկներին:

18

Ամեն դեպքում լաստանավի ուղևորության նախապատրաստական աշխատանքներն ավարտվել են և կարճ ժամանակ անց, 2007 թվականի հունվարի 1-ին 0 ժամ 00 րոպեին դարուփոսցիների համար կսկսվի նոր դա-րաշրջան:

Ժուռնալիստները խմբվել են «Ձվարթնոց»-ի VIP սրահի մուտքի մոտ և ցանկանում են հարցեր տալ նավապետին: Սակայն նավա-պետի թիկնագործի պետ, զրահատանկային զորքերի մարշալ Սարկիս Գրիգորովի թույլ-տվությամբ նավապետի աշխատասենյակ են մտնում միայն «Հարությունյան և ընկ.» ալիքի մեկնաբան Նանարիկ Նանարիկյանը, «Դարուփոս» հեռուստաալիքի մեկնաբան Չաղիկի Չաղիկյանը և «Դ-2» հեռուստաալի-քի մեկնաբանը, որի անուն-ազգանունը դժվար է արտաբերել: Կարճ խոսեց նավա-պետը, շատ կարճ, բայց իմաստալից խոսքեր ասաց, որոնցից արժե հիշատակել թեկուզ այն միտքը, որ ինքը դեռ երիտասարդ է, ուժ ու ավյունով լեցուն և չի պատրաստվում թո-շակի գնալ: Թող որևէ մեկը հույս չունենա մոտ ժամանակներում նավապետի դեկի մոտ կանգնելու համար: Ժուռնալիստները շուռ եկան դեպի Դարուփոսի զորքերի հրա-մանատարի կողմը և սպասեցին նրա արձա-գանքին: Սակայն վերջինիս դեմքի մկանն անգամ չշարժվեց, որովհետև ինքը պինդ մարդ է, խելոք մարդ է և գիտե, որ չեֆին բնավ չի կարելի նեղացնել, քանի նա դեռ չեֆ է:

Ժուռնալիստները դուրս եկան նավապետի աշխատասենյակից և փորձեցին հարցա-զուրյցի հրավիրել Դարուփոսի ականավոր դեմքերին: Առաջինը, իհարկե, բռնացրին Դարուփոսի արտաքին կապերի շփման լիա-զորին: Սակայն նա գրեթե ոչինչ չասաց (ինչ-պես վայել է հմուտ դիվանագետին):

- Հասկանալի է, որ նոր նավապետը, եթե, իհարկե, այն լինի, ես չեշտում եմ, եթե, իհար-կե, նավապետը փոխվի, ինքը նոր նավապե-տը կորոշի, թե ով կլինի արտաքին կապերի շփման նոր լիազորը, թեև անկեղծ ասած, ինձանից լավի չեն գտնի, - ասաց նա և վազ-րային թռիչքներ գործելով գնաց տեսնելու, թե հարևանները այդ ինչ հիմար նավթամուղ-ներ, գազամուղներ, երկաթուղիներ են կա-ռուցում:

Ժուռնալիստների հաջորդ թիրախը Դարու-փոսի թաղային կառավարման լիազորն էր, որը, չգիտես ինչու, աղանձ էր ուտում: «Տես, է՛, տես, է՛ մեր ընկերն էլ քանցած ուտել գի-տի», ժուռնալիստներին դիմելով խնդաց. «Ուժն է ծնունդ իրավունք» բաց բաժնետիրա-կան ընկերության գործադիր տնօրեն Գալաչ Յովհաննիսյանը: «Այ մարդ, սուս մնա, էլի, - կողքից խորհուրդ տվեց ահաբեկչության դեմ պայքարի լավագույն մասնագետ Հակոբ Տիգրանյանը: - Քեզ մի անգամ ծեծել են, էլի կծեծեն»:

- Հանգի՛ստ, հանգի՛ստ, - ասաց «Դաշին-քի» կոմանդոլոչին, - հանգիստ, Գալաչ: Չվա-խենաս: Ծեծվելուց ոչ ոք դեռ չի մեռել: Դու գրի, ես քո մեջքին կանգնած եմ:

Լաստակայանում վերջապես երևաց Դա-րուփոսի վարչապետը, որի թևի տակ փոք-րիկ մի փաթեթ կար: «Չորրորդ Դարուփոսի» թղթակիցն անմիջապես վրա տվեց.

- Դո՛ւք էլ եք մեկնելու «Տիտանիկով»:
- Էդ ի՞նչ ես ասում, այ աղջի: Ես յոթ տարի չեմ գնացել, հըլը հարյուր քսանյոթ տարի էլ չեմ գնալու:
- Էդ ի՞նչ է Ձեր թևի տակ: Խոզի բո՛ւլ:

- Բա հո հավի բուղ չի, այ աղջի:  
- Իսկ ինչի՞ ուշացաք: Կառավարության միս-տի՞ էիք:

- Այ մարդ, ես աղջիկը զարմանալի աղջիկ է... Մերի, ես ո՞ր թերթից է... հա՛, «Չորրորդից», ես էլ իմացա, թե 6-ից է... Աղջիկ ջան, ես միս-տից չեմ գալիս, խաչ էինք ուտում:

- Մի՞թե խաչն ու խորովածն այնքան կա-րևո՞ր են:

- Աղջիկ ջան, Նագիկ ջան, ականջիդ օղ արա. ով լավ ուտում է, նա էլ հանգիստ կկա-ռավարի, որովհետև կուշտ մարդու, չաղ մարդու ներվերը հանգիստ կլինեն: Իսկ հան-գիստ ներվերով մարդն ամբախ-զամբախ չի խոսի:

- Դուք ո՞ւմ նկատի ունեք. Հայրիկ Պարույ-րի՞ն, թե՞ Արտաշեսյան թագավորության իրավահաջորդ Գեղամին:

- Դու ասացիր, - ասաց վարչապետը և գնաց «Ջերմուկ» խմելու, որովհետև «Ջերմուկը» մարտողական է, ասում են Դարուփոսի բոլոր հեռուստաալիքները միաբերան: Ժուռնա-



լիստները, հասկանալի է, անմիջապես գտան վարչապետի մատնանշած մարդ-կանց: Հայրիկ Պարույրը, երբ իմացավ, թե իր մասին ինչ է ասել վարչապետը, զայրա-ցավ:

- Դե. պարզ է, թե ինչ էր խոսելու Խթը-ի այդ լրտեսը, - ասաց Հայրիկ Պարույրը: - Նա միշտ էլ դավաճանել է ազգային մտածողությանը: Այն 18 տարիներին, երբ ես տառապում էի ԳՈՒԼԱԳ-ի ճամբարներում, երբ ամեն դիրքով լուսանկարվում էի այդ ճամբարներում՝ սե-րունդներին իմ տառապանքն ակնհայտ դարձնելու համար, երբ ազգային-քաղաքա-կան պատանդ էի ամերիկաներում և ամբողջ ժողովուրդն ինձ ճանաչում էր որպես Դարու-փոսի վարչապետ, ես մարդն էստեղ նստած իր համար վարչապետական աթոռի հարցն էր լուծում: Այն ժամանակ, երբ ամբողջ աշ-խարհի մամուլը գրում էր ամենախալածյալի, այսինքն իմ մասին, ես մարդն էստեղ քեֆեր էր քաշում: Պետք է լրջորեն ուսումնասիրել այս մարդու կենսագրությունը:

Ավելի բոցաշունչ էր Արտաշեսյան թագա-վորության ժառանգորդը:

- Սիրելի ազգ, - սկսեց նա: Անմիջապես առաջ եկավ «Ազգի» թղթակի-ցը և ասաց հա՛...

- Ես ազգին եմ դիմում, ոչ թե «Ազգին», - վրդովվեց Գեղամը: - Իհարկե, լավ կլիներ, որ ինձ լսեր ողջ հայոց աշխարհը կամ ժողո-վուրդը: Բայց քանի որ «Ժողովուրդն» այլևս լույս չի տեսնում, իսկ «Հայոց աշխարհը» փա-կել է իր դռները ծեր ապագա նավապետի առաջ, ուրեմն ասիմանափակվեց եղածով... Եվ, այսպես, սիրելի ազգ, այն ժամանակ, երբ ես եվրոխորհրդարաններում խոսում եմ մեր Դարուփոսի թերությունների մասին, երբ մեկ առ մեկ նշում եմ մեր վիճակագրության հրամցրած սխալ տվյալները, երբ տնտեսա-կան աճի ճշգրիտ տվյալներ եմ բերում, փրկության ծրագրեր եմ առաջարկում, ոմանք ինձ ոչ միայն խայտառակում են մա-նուլով ու հեռուստատեսությամբ, ինչպես նաև էլեկտրական շոկի են ենթարկում: Դե, հիմա եկեք, տեսեք, թե ես ինչպես եմ դեկա-վարելու այս նավը: Բայց թող մեր ազգի թշնա-միները չուրախանան, ես, միևնույն է, նավա-պետի ղեկն ստանձնելու եմ...

Նրա խոսքը կիսատ մնաց, որովհետև նա-վապետի օգնական Սարկիս Գրիգորովը կի-սաբաց արեց դուռը և մատով իր մոտ կանչեց Գեղամին: Ընդամենը երկու րոպե մնաց Արտաշեսյան թագավորության ժառանգորդը ներսում, ապա հյու-հնազանդ դուրս եկավ նավապետականից և գնաց Ամանորի սեղա-նի համար առատ գնումներ անելու: Իրեն հա-սածը քիչ էր, բայց ոչինչ: «Ավելի լավ է քիչ, քան ոչինչ», ստորեց ժառանգորդը:

Ժուռնալիստները փնտրում էին Ամենա-ամենային, որովհետև անչափ կարևոր էր պարզել, թե նա՞ էլ է նստելու «Տիտանիկ»: Փնտրեցին Չարուփոս-Դարուփոս միջտըն-տեսական կառավարական հանձնաժողո-վում, չկար, փնտրեցին Սիրաքում, ասացին, որ քիչ առաջ նստեց ինքնաթիռ, փնտրեցին ՍԱՏՆ-ի կենտրոնակայանում, ասացին, որ մի քանի րոպե առաջ նստել է Կոնստե Մարլո թռչող ինքնաթիռը, այստեղ տեղեկացրին, որ արդեն երեք օր իրենց մոտ չի եղել և խոր-հուրդ տվեցին որոնել Նյու Յորքի Պատի փո-ղոցում: Այստեղ ժուռնալիստներին դիմավո-րեց մի ինչ-որ խմբագիր և շատ մշուշոտ պա-



տասխաններ տվեց: Ժուռնալիստներն անմիջապես հասկացան, որ Պատի փողոցում լուրջ, շատ լուրջ հարցեր են քննվում: Լուրն անմիջապես հասավ Դարուփոս, և բոլորը տրամադրվեցին նոր անակնկալների:

«Նոր դարաշրջաններ» ձեռնարկության տնօրեն Կարապետ Ալամյանն անմիջապես հրամայեց փակել Փալաքալը: «Հորինած երկիր» ազգագրական խմբի գեղարվեստական ղեկավար Բաղդասար Ղևոնդյանը անմիջապես մեկնեց Փարիզ՝ «Պատվարժան հետևակային» շքանշանը հետ տալու և նոր խոստումներ ստանալու համար: Երկաթուղային նարդիստների ընկերակցության պրեզիդենտ Առաքել Հարությունյանը և սահարագուլիս բժիշկների միության լրախոս Զառիթա Զանջուղազյանը հայտարարեցին, որ անհայտ անձինք իրենց դեմ մահափորձ են իրականացրել:

Այս բոլորի ներկայությունն, իհարկե, հետաքրքրական էր, սակայն ժուռնալիստների համար կարևոր էր Ամենա-ամենայինի հետ հանդիպելը: Նրանց ջանքերն իզուր չեցան: Ամենա-ամենան բանակում ծառայող և չծառայող տղաների մայրերի հանդիպման էր: Ժուռնալիստները դառնում էին այն ժամանակ, երբ նա իր խոսքի վերջին մասն էր արտասանում:

- Սիրելի մայրեր, - ասում էր նա, - դուք կարող եք հանգիստ լինել: Ձեր մտքով անգամ չանցնի, թե ձեր զավակներին տիրություն անող չկա: Կա: Ես եմ նրանց տերը: Դուք հանգիստ եղեք:

Ժուռնալիստները կարողացան միայն մեկ հարցի պատասխան ստանալ Ամենա-ամենայինից: «Հարությունյան» հեռուստաալիքի թղթակցի հարցին, թե ինքը նստելու է «Տիտանիկ» լաստանավը, նա պատասխանեց.

- Եթե անգամ այս լաստանավն անցներ Կոնտե Մարլոյով, ապա ես չեի բարձրանա տախտակամած: Ես մնալու եմ Դարուփո-

սում և մնալու եմ ընդմիշտ:

Ժուռնալիստներին զարմացրեց Ամենա-ամենայինի վստահությունը: Ի պատասխան այդ զարմանքի, Ամենա-ամենան պատասխանեց.

- Է՛, լավ, եթե ես գնամ, բա ձեր նավապետն ո՞վ է լինելու, Թորոս Տիգրանյանը... Բա էս աշխարհն ի՞նչ կասի: Հի ասի՞, թե ինչու նավապետ չընտրեցիք ձեր միջի ամենախելոքին, ամենահմուտին, ամենաուժեղին:

- Աշխարհն անշուշտ կասի, - շշմջաց ՎԷՍ-31 ռադիոկայանի թղթակիցը:

Բայց այս ռադիոկայանի ծայրը շատ ցածր էր և լսող չէրավ...

...Ամեն դեպքում, «Տիտանիկն» արդեն պատրաստ էր ուղևորության, երբ տեղ հասան ևս մի քանի ուղևորներ:

Ժուռնալիստները մոտեցան Դարուփոսի բանկի (ԴԲ-ի) նախագահին և հարցրին, թե ինչ տրամադրությամբ է մեկնում ուղևորության:

- Ես որպես քաղաքացի՝ մտածող մարդ եմ, - ասաց ԴԲ-ի նախագահ Սարգիս Տիգրանյանը: - Ուստի լավ եմ մտածել իմ ապագայի մասին: Նավ չեմ բարձրանալու: Իսպանիայում, Խաղաղ օվկիանոսի ափին հույս ունեմ մի երկու հարյուր չենց բացել և վայելել հանգիստ:

Նրա հետ համաձայն չէր, իհարկե, Սահակ Բարիզալուստյանը.

- Մարդու կրքերը և գաղափարները չի կարելի կապել եղանակի հետ: Այսօր արև է, ինչպես տեսնում եք, վաղը գուցե ծյուն գա, բայց ինչպես մեծ մտածողներից մեկն է ասել (հիմա անունը չեմ հիշում)՝ «Մարդու գործն է միշտ անմահ»: Այսինքն, ուզում եմ ասել, որ հազար հատ «Բարզավաճ Դարուփոս» գա ու գնա՝ մարշրուտկեքը միշտ լինելու եմ:

- Իսկ Դուք դժգոհություններ, մեղություններ չունե՞ք:

- Չէ, հա, «ԲԴ»-ն ինձ ոչ մի բանով չի կարող խանգարել: Միայն մի փոքր հարց ունեմ լու-

ծելու՝ տղայիս աշխատանքի տեղավորեմ, թե չէ Արմանչիկս մեղք է, ազնվագույն տղա է, ևս գելերի մեջ ի՞նչ պիտի անի:

Մագման Արմենյանը, որին դարուփոսցիները կարծ Մագ եմ ասում, ավելի լավատեսորեն էր տրամադրված:

- Ես հանդգնած եմ, որ այդքան բոբիկ ու մերկ չէ մեր ոգեղեն արգանդը: Դեռ կզան ժամանակներ, երբ ռեժիսորը ռեժիսոր կլինի, երկրապահը՝ երկրապահ, և ժողովուրդը կճանաչի իր հանճարներին:

- Անպայման, անպայման, - ծայնեցին երկու հանճարները: - Կաճառատան անմահներս՝ ինչպես ժամանակին անվանել է մեզ մեծն Ֆրեյդը, դեռ կգրենք մեր գրքերը և կասենք, թե ինչպես կարելի է գրել ու մրցանակներ ստանալ:

Սակայն լաստանավի հրամանատարությունն այս վերջիններին հասկացրեց, որ բալաստ արդեն ունեն և ընդդիմությունից բացի ուրիշ յուզագ էլ իրենց հարկավոր չէ...

«Տիտանիկի» շչակները սուլեցին և ինչոր երաժշտություն հնչեց Դարուփոսի հիմնի փոխարեն: Իսկ այդ երաժշտությունը հնչեց, որովհետև Դարուփոսը մի շաբաթից ավելի օրհներգ չունեց:

- Փորձ է արվում մեր ժողովրդին պարտադրել չարուփոսյան պղծերգը, - վրդովվեց Հայրիկ Պարույրը և գնաց այս անգամ մաշնակների մոտ իր դարդը լացելու:

Ուրիշ արտակարգ պատահարներ չգրանցվեցին, եթե հաշվի չառնենք այն, որ նավապետը վերջին պահին հրաժարվեց նավ բարձրանալ: Ինքը և Ամենա-ամենան որոշեցին մնալ Դարուփոսում՝ ի շահ Դարուփոսի բարգավաճմանը:

2007 թվականի հունվարի 1-ին 0 ժամ 00 րոպեին «Տիտանիկն» սկսեց իր ուղևորությունը:

Բարի ճանապարհ: *Գալո ՍԵՐԳՈՅԱՆ*

# ԿԱ ԱՄԵՆ ՏԻՊԻ ԿԵՆՂԱՆՈՒ ՏԱՐԻ, ԻՍԿ Ե՞ՐԲ ԿԼԻՆԻ ՄԱՐԴՈՒՒ ՏԱՐԻ

(Շան տարին շան տեղ չդրեց մեզ)

